




十一









Պ Ա Ս Կ Ա Լ

ԹԱՅԻՆԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

1280477

ԸՆԹԱՐԱԿԱՆ

Համար № 152  
Շաբաթինեան  
Շաւարշ Թունեան  
Իրան-Թաւրիզ

928.1(հյօ) Դասից

# ՊԱՍԿԱԼ

ՆԲԱ ԿԵՑՆՔԸ ԵՒ ԳԻՏՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆՔՈՒԹԻՒՆԸ

ԹԱՐԳՄ. Գ. ԹԱՂ.Ր.



Թ. Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊՈՐՎԱ. Մ. Դ. ՊՈՏԻՎՆԵԱՆ

Տիպոգրաֆիա Մ. Դ. Պոտիվնաց, Գոլ. պր., ձ. № 41.

1899



Дозволено Цензурою. Тифлисъ, 9-го Октября 1898 г.

## ԳԼՈՒԽ Ա.

Պատկալի մանկութիւնը:—Վաղաժամ՝ զարգացումը:—Մոլ  
մահը:—Հօլ ազդեցութիւնը:—Տասներկու տարեկան Պատ-  
կալը հնարում է Երկրաչափութիւնը

---

Բլէզ Պատկալ՝ ծնունջ Կլերմօն քաղաքում 1623  
թուի լուսիսի 19-ին: Նրա հայրն էր Էտիէն Պատ-  
կալ, իսկ մայրը Անտուանէտ Բէգօն:

Պատկալի ընտանիքը լայտնի էր աչքի ընկնող  
ընդունակութիւններով: Նրա հայրը բարձրագոյն  
կրթութեան տէր մարդ էր, տեղեակ լեզուների,  
պատմութեան, գրականութեան և լաւ մաթեմատի-  
կոս: Բլէզի մեծ քոյրը, Ժիլ'բերտն, իւր ժամանակի  
ամենակրթուած կանանցից մէկն էր. նա հօր զե-  
կավարութեամբ պարապում էր մաթեմատիկալով  
և լատիներէնով: Սորան է պատկանում նաև իւր  
հոչակաւոր եղբօր լիակատար կենսագրութիւնը:  
Պատկալի փոքր քոյրը, Ժակելինը, լայտնի էր բա-  
նաստեղծական և բեմական տաղանդով: Իսկ ինչ  
վերաբերում է իրան Պատկալին՝ նա զեռ ամենա-

փոքր հասակից արտակարգ զարգացման նշաններ էր ցոլց տալիս:

Պասկալի մանկութիւնից հետաքրքիր փաստեր է պատմում նրա մեծ քրոջ աղջիկը, որը նոյնպէս ժառանգել էր իւր ընտանիքի գրականական հակումները:

Երբ Պասկալի մէկ տարին լրացաւ՝ նորան «մի անսովոր բան» պատահեց, այն է՝ մի տարօրինակ նեարդալին հիւանդութիւն, որը նման էր թուլացկոտութեան: Այս հիւանդութիւնը առհասարակ շատ էր տարածուած այն ժամանակ մանուկների մէջ, միայն թէ Պասկալի նեարդալին տկարութիւնը մի տեսակ ջրդողութեան հետ էր կապուած. ջրի հէնց միայն տեսքից ցնցումներ էին սկսում, բացի դրանից փոքրիկ Պասկալի մէջ հետեւեալն էր նկատուած. միամեայ մանուկը խանդոտութիւն էր ցոլց տալիս դէպի հայրը մօր համար: Նա սիրում էր՝ երբ հայրը կամ մայրը առանձին առանձին իրան փալփալում էին. բայց բաւական էր որ հայրը տղափի ներկայութեամբ գգուէր մօրը կամ նոյն իսկ մօտենար նորան՝ երեխան սկսում էր ճշալ, ցնցւում էր և թուլանում: Այս հիւանդութիւնը մի քանի շաբաթ տևեց:

Փոքրիկ Պասկալը դեռ երեք տարեկան հասակում զրկուեցաւ մօրից: Այս կորուստը մեծ աղդեցութիւն ունեցաւ նրա զարգացման վրայ և որոշեց նրա ապագան: Պասկալը իւր հօր միակ որդին

էր. այս իրողութիւնը, միանալով երեխալի զարմանալի ընդունակութիւնների հետ՝ դրդեց հօրը խխառշատ զբաղուել նրա մտաւոր կրթութեամբ. բայց մօր բացակալութեան պատճառով երեխալի ֆիզիքական զարգացումն առանց հոգատարութեան մնաց, ուստի և դեռ մանկական հասակում Պատկալը լաւանի էր իրբե վատառողջ երեխալ:

Պատկալը երբէք ոչ մի ուսումնարան չէ մտել և բացի հօրից՝ այլ ուսուցիչ չէ ունեցել:

1631 թափն, երբ Պատկալ՝ դեռ ուժը տարեկան էր՝ նրա հայրը ժամանակի սովորութեան համեմատ ծախեց իւր պաշտօնը և իւր ունեցած չափաւոր դրամագլուխի մեծ մասը բանկ գնելով՝ ընտանիքով Պարիզ տեղափոխուեց:

Հայրը բաւական ազատ ժամեր ունենալով՝ համարեա միայն որդու մտաւոր դաստիարակութեամբ զբաղուեց:

Պատկալի քոյրը հաւատացնում է, որ հայրն ամեն կերպ աշխատում էր չափաւորել երեխալի աշխատասիրութեան բուռն ձգտումները: Այս մասմբ ճշմարիտ է, բայց միայն Պատկալի պատանեկութեան առաջին տարիների վերաբերմամբ:

Այն ժամանակները լաճախ ութամեալ երեխաներին լատիներէն էին սովորեցնում, բայց Պատկալի հայրը վճռեց երեխալի հետ լատիներէն սկսել նրա 12 տարին բոլորելուց լետով, իսկ մինչեւ այդ ժամանակ աւանդում էր քերականութեան ընդհա-

նուր կանոնները և, որքան կարելի է եղբակացնել  
ձեռքի տակ եղած սակաւաթիւ տեղեկութիւններից՝  
աւանդում էր այն ժամանակուալ ուսումնարանների,  
վարժապետներից աւելի խելացի և զիւրըմբանելի  
եղանակով։

Փոքրիկ Պատկալ'ն աչքի էր ընկնում իւր զար-  
մանալի հատկացողութեամբ և հարցասիրութեամբ։  
Նատ անգամ հալրը պատմում էր երեխալի երեա-  
կալութիւնը զրգուղ բաներ, բայց երեխան խկոյն  
հետամուտ էր լինում բացատրութեան, և երբէք  
վատ կամ թերի պատասխանով չէր բաւականանում։  
Նա զարմանալի ընդունակութիւն ունէր ստութիւ-  
նը ճշմարտութիւնից որոշելու, Աթէ որիէ բացա-  
տրութիւն սիսալ էր համարում՝ նա աշխատում էր  
իւր սեփական բացատրութիւնը տալ։ Մի անգամ  
ճաշի ժամանակ հիւրերից մէկը դանակով խփեց  
ֆաւանսէ ափսէին, որով մի երաժշտական ձայն  
հնչեց, բայց հէնց որ ափսէի վրալ ձեռք զրին՝  
ձայնն խկոյն զագարեց։ Պատկալը զարմացաւ և  
բացատրութիւն պահանջեց։ Ոչ մի բացատրութիւն  
չստանալով՝ նա ինքն սկսեց փորձեր անել։ Այս  
փորձերի մասին Պատկալը զրեց զանազան նկատո-  
ղութիւններ, որոնց «Զայների մասին հետազօտու-  
թիւն» մեծահնչիւն անունը տուեց։ Այդ ժամանակ  
Պատկալը 12 տարեկան էր։ Դեռ որանից առաջ  
մի դէպք պատահեց, որով երեան եկան Պատկալի

մաթեմատիկայի մէջ ունեցած զարմանալի ընդունակութիւնները:

Պասկալի հայրն ինքը մաթեմատիկայով շատ էր պարագում և սիրում էր իւր մօտ մաթեմատիկոսներ ժողովել: Բայց հայրը որդու ուսման ծրագրում դիտմամբ մաթեմատիկան լեռածգել էր. նա ցանկանում էր, որ որդին առաջ լատիներէնի մէջ կատարելագործուի, ապա սկսէ պարագել մաթեմատիկայով: Նատ լաւ իմանալով, թէ որքան հարցասէր է որդին՝ նա ամեն կերպ աշխատում էր թաղցնել նրանից բոլոր մաթեմատիկական գրքերը և նրա ներկայութեամբ իւր բարեկամների հետ մաթեմատիկական հարցերի մասին երբէք չէր խօսում: Երբ երեխան խնդրում էր, որ իրան մաթեմատիկա սովորեցնեն՝ հայրը նորան խոստանում էր ապագայում սովորեցնել, իբրև պարզե: Փոքրիկ Պասկալը հօրը խնդրեց, որ գոնէ բացատրէ, թէ ինչ տեսակ գիտութիւն է երկրաչափութիւնը: «Երկրաչափութիւնը, պատախանեց հայրը, մի գիտութիւն է, որը մեզ միջոց է տալիս կանոնաւոր կերպով ձեւիր գծագրել և գտնել այդ ձեւերի միմեանց հետ լարաբերութիւնները»:

Տասներկու տարեկան երեխան սկսեց մտածել այս որոշման վրայ: Այն աստիճան գրաւուեց մտածմունքներով, որ հանգստառութեան ժամերին դահլիճում, որտեղ նա սովորաբար խաղում էր՝ սկսեց գծագրել զանազան ձեւեր, որոնց խկական անուն-

ներն անզամ չէր իմանում, նա ածուխով ուղիղ գծեր էր քաշում, սրոնց «ձողեր» էր անուանում, գծագրում էր շրջաններ, աշխատելով ըստ կարելոյն կանոնաւոր գծադրել, այս շրջանները նաև «օղակներ» էր անուանում: Յետոք աշխատում էր գտնել, թէ ինչ համաշափութիւններ կան այս ձևերի և իրանց մասերի մէջ: Զափելու միջոցով գտած լատկութիւնների ապացուցները որոնելով՝ Պատկալը կազմեց իւր թէօրէմաններն ու աքսիօմանները և փոքր առ փոքր հասաւ Եվլիդէսի առաջին դրքի 32-երորդ թէօրէմային, որը ասում է, որ եռանկիւնու ներքին անկիւնների գումարը հաւասար է, երկու ուղիղ անկիւնի:

Հենց այն բոգեին, երբ Պատկալ՝ վերջացնում էր ապացուցանել այս թէօրէման՝ ներս մտաւ հայրը, որը չէր էլ կասկածում որդու դրազմունքների մասին: Որդին ետ իւր կողմից այնպէս խորասուզուած էր մտածմունքների մէջ, որ իսկուն չնկատեց հօր ներկայութիւնը: Դժուար էր ասել, թէ երկուսից նրն էր աւելի ապշած: արդեօք որդին, որը լանկարծ բռնուել էր արգելուած պարապմունքի ժամանակ, թէ հայրը, տեսնելով որդու գծագրած ձևերը: Հայրը չափազանց զարմացաւ, երբ որդին խոստովանեց, որ ինքն աշխատում է ապացուցանել եռանկիւնու հիմնական լատկութիւնները:

— Ի՞նչպէս հասար մինչեւ այսուղ, վերջապէս հարցրեց հայրը:

—Ահա ինչպէս, ևս սկզբում ահա թէ ինչ գտալ —և որդին խօսեց եռանկիւնու արտաքին անկիւնների լատկութեանց մասին: —Խոկ ալս ահա թէ ինչպէս գտալ —և հետեւեցին մի շարք բացատրութիւններ: Այսպէս առաջ գնալով և ասելով օրինակ, «Երեք ծողերից բաղկացած ձեր մէջ՝ երկու ծողը միասին վերցրած՝ երկարն են երրորդ ծողից», փոքրիկ Պատկալը բացատրում էր հօրը իւր գտած ածողերի և օղակներից լարաբերութիւնները: Այսպիսով նա վերջապէս հասաւ իւր որոշումներին ու ակտիօմաններին:


Հայրը ոչ միայն զարմացաւ, ալլ և երկիւղ կրեց մանկական մտքի ալս տարօրինակ ուժից: Ոչինչ չասաց որդուն: Ելաւ սենեակից և խսկոյն գնաց իւր մտերիմ Լը —Պալիէրի մօտ, որ մի կրթուած և Պատկալ'ներին մտերիմ անձն էր: Իւր բարեկամի չափազանց լուզմունքը առանելով, մինչև անգամ նրա աչքերում արտասուք նկատելով՝ Լը-Պալիէր վախեցաւ և խնդրեց շուտով լայտնել դրա պատճառը:

— Ես արտասում եմ ոչ թէ տիրութիւնից, ալլ ուրախութիւնից, — ասաց Էտիէն Պատկալը: — Դուք, ի հարկէ, գիտէք, ինչպէս խիստ թագցրել էի որդուցս մաթեմատիկական գրքերը, որպէսզի նրա ուշադրութիւնը չվրիպի ալլ զբաղմունքներից: Բայց եկէք տեսէք, ինչ է արել:

Եւ բախտաւոր հայրը իւր բարեկամին իրանց

տունը տարաւ։ Աս ես խիստ զարմացու և ասաց-  
—իմ կարծիքով՝ այս տեսակ ընդունակութիւ-  
նը չպէտք է փականքի հնթարկել և նրանից  
այդ գիտութիւնը չպէտք է ծածկել։ Խոկոյն և եթ  
պէտք է նորան գրքեր տալ։

Պասկալի հայրը Յւկլիդէսի «Տարերք»-ը տուեց  
որդուն, թոյլ տալով նորան աղատ ժամերին կար-  
դալ։ Երեխան ինքը միայնակ կարդաց Յւկլիդէսի  
երկրաչափութիւնը, նա ոչ մի անգամ չդիմեց հօր  
օգնութեանը։ Կարդացածով չբաւականանալով՝  
նա լրացնում և լորինում էր։ Ուստի առանց չա-  
փազանցութեան կարելի է ասել, որ Պասկալը եր-  
կրորդ անգամ դառաւ նախկին լոյն և եգիպտացի  
գիտնականների մէ՛ քանի սերունդների ատեղծած  
երկրաչափութիւնը, սա վաստ է, որի նմանը չկայ  
մինչեւ անգամ ամենահոչակաւոր մաթեմատիկոսնե-  
րի կենսագրութիւնների մէջ։ Կլերո 18 տարեկան  
հասակում գրեց իւր նշանաւոր հետազոտութիւննե-  
րը, բայց նա լու նախապատրաստուած էր, այն էլ  
18 տարեկան հասակում և ոչ 12, ինչպէս Պասկալ՝  
էր։ Նոյն խակ բոլոր ժամանակների ամենամեծ մա-  
թեմատիկոսներից մէկի, Նիւտոնի ընդունակու-  
թիւնները համեմատաբար աւելի ուշ զարդացան։  
Բոլոր մեծանուն գիտնականների մէջ Պասկալ՝ ամե-  
նից աւելի իրաւունք ունի կրելու վաղաժամ զար-  
դացած, նոյնքան էլ վաղաժամ ահճեաւացած համե-  
ճարի տիտղոսը։



## ԳԼՈՒԽ Բ.

Առաջին գիտական գործերը—Ֆրանսիական Գիտութեանց  
Ճեմարանի սկիզբը—Թուաբանական մեքենայ

Պասկալի հօր և նրա մի քանի բարեկամների  
մօտ տեղի ունեցող ժողովները կանոնաւոր նիստե-  
րի կերպարանք ստացան։ Ետիէն Պասկալի շրջա-  
նին պատկանող մաթեմատիկոսները շաբթէնը մէկ  
անգամ ժողովւում էին այն նպատակով, որ կամ  
ժողովի անդամներից մէկի շարադրութիւնը կար-  
դան, կամ զանազան հարցեր ու խնդիրներ առա-  
ջարկեն։ Երբեմն կարդացւում էին նաև արտասահ-  
մանի գիտնականներից ուղարկուած գրութիւննե-  
րը։ Այս մասնաւոր համեստ ընկերութիւնը, կամ  
աւելի լաւ ասած, մտերիմների շրջանը, Պարիզի  
ապագայ հռչակաւոր Ճեմարանի սկիզբը դրեց 1666.  
թուին, երբ արդէն Պասկալն ու իւր հայրը վախ-  
ճանուած էին։ Փրանսիական կառավարութիւնը  
պաշտօնապէս ճանաչեց այդ ընկերութիւնը, որը

գիտութեան աշխարհում արդէն մեծ անուն էր վաստակել:

Պասկալ՝ զեռ տասնվեց տարեկան հասակում եռանդով մասնակցում էր ընկերութեան պարապմունքներին։ Նա մաթեմատիկայի մէջ արդէն այնքան ուժեղ էր, որ համարեա տիրապետում էր այն ժամանակուայ բոլոր մեթոդներին։ Հետաքրքիր նորութիւններ հաղորդողների մէջ պատանի Պասկալը առաջիններից մէկն էր։ Ոչ միայն հալրը, այլ մինչև անգամ հպարտ եւ նախանձու մաթեմատիկոս Ռոբէրվալը (բայտնի կշեռքի հնարողը) և ընկերութեան միւս անդամները զարմանում էին պատանու ընդունակութիւնների վրայ։ Պասկալը իսիստ լաւ էր կարողանում ալլօց աշխատութիւնները քննել։ Շատ անգամ Խտալիալից և Գերմանիալից ինոգիրներ և թէօրէմաններ էին ուղարկուում, և եթէ սրանց մէջ որևէ սխալ էր լինում առաջին նկատողներից մէկը Պասկալն էր լինում։

Տասնվեց տարեկան հասակում Պասկալ՝ մի շատ հիանալի հետազօտութիւն գրեց կոնական հատուածների մասին, այսինքն այն կոր գծերի մասին, որոնք ստացւում են կոնուսը (շաքարի գլխի ձեր) մակարդակով կտրելուց (էլիպսիս կամ ձուաձեգիծ, պարաբոլա կամ զուգորդագիծ և հիպերբոլա կամ անդրագիծ), Դժբախտաբար այս աշխատութիւնից միայն մի հատուած է մեզ հասել։ Պասկալի մտերիմները պնդում էին, որ «Արքիմեդէսի ժամա-

նակրուանից ի վեր երկրաչափութեան մէջ արուած չէ եղել մարդկացին մտքի այսպիսի մի ճիբ։ այս, ի հարկէ, չափաղանցութիւն է, որը առաջ է եկել հեղինակի անչափահասութեան վրայ զարմանալուց։ Պատկալի դասած թէօրէմաներից մի քանիսը ճիշտ որ խիստ նշանաւոր էն Հէնց ալդ ժամանակ նորան խորհուրդ էին տալիս, որ տպագրել տայ իւր աշխատութիւնը, բայց Պատկալը լետաձգում էր դուցէ նրա համար, որ ցանկանում էր ստեղծել մի աւելի նշանաւոր գործ։ Նրա քոյրը հաւատացնում է, որ եղբայրը համեստութիւնից էր ալդակս անում, թէն խիստ կատկածելի է, որովհետև Պատկալի չափաղանց համեստութիւնը երեան եկաւ նրա կեանքի վերջին տարիները միան։

Հայրը որդու արտակարգ ընդունակութիւններով պարծենալով՝ զրեթէ չէր խանանւում նրա մաթեմատիկական աշխատութիւններին, որոնց մէջ որդին շուտով հօրը զերազանցեց. բայց նա որդու հետ զեռ պարապում էր հին լեզուներից, տրամաբանութիւնից և բնադիտութիւնից։

Չափաղանց աշխատութիւնը խախտեց Պատկալի առանց այն էլ թուլ առողջութիւնը։ Տասնութ տարեկան հասակում նա անդադար գանդատւում էր զլխացաւից, որի վրայ սկզբում այնքան էլ ուշադրութիւն չէին դարձնում։ Բայց նրա առողջութիւնը վերջնականապէս խախտուեց թուարանական մեքենան հնարելու ժամանակ։

Տառնութ տարեկան հասակում Պատկալը հնարինց թուաբանական մեքենայ, ամենասրամիտ մեքենական գիւտերից մինը, որը խիստ կարևոր է հետաքրքրի է տեսական, թէօրեափական տեսակէտից, թէև բոլորովին չարդարացրեց երիտասարդ հնարաղի լոյսերը։ Հաւատացնում են, որ այս մեքենայի հնարելու պատճառը նրա հօր Պուանի մէջ պաշտօն ստանալն էր մի պաշտօն, որ թուաբանական մեծ աշխատանք էր պահանջում։ Հօր աշխատանքը թեթևացնելու նպաստակով Պատկալը հնարեց իւր հաշուեմեքենան։ Այս մեքենան աւելի նշանաւոր է նրանավ, որ Պատկալը սրանով ցուց տուաւ, որ կարելի է մեքենական գործողութեան վերածել ոչ միայն Գիպիքական, այլ և մտաւոր աշխատանքը։ Աս գիւտով Պատկալի մէջ արմատացաւայն զաղափարը, որ մարզուս միտքը մեքենաբար է գործում, և որ մի քանի բարդ մտաւոր գործողութիւններ իրանց էւթեամբ մեքենական գործողութիւններից չեն զանաղանեւում։

Պատկալի հնարած մեքենան իւր կազմութեամբ բաւական բարդ էր. նրա օգնութեամբ հաշուելու համար մեծ վարժութիւն էր պահանջում։ Հենց այս է պատճառը, որ այդ մեքենան մնաց իբրև ժամանակակիցներին զարմանք պատճառով մեքենական մի հրաշալիք, որը սակայն գործածութեան մէջ չմտաւ։

Այս մեքենան հնարելու վրայ գործ դրած աշ-

իստանքը խշուա վեասակար ազգեցութիւն ունեցաւ  
Պատկալի կաղմուածքի վրաէ. նա ինքն ասում է, որ  
տասնութ տարեկան հասակից ի վեր չէ փշում ոչ  
մի օր, որ բոլորովին առողջ եղած լինի:

Պատկալի թուաբանական մեքենան վերին աս-  
տիճանի զարմացրեց իւր ժամանակիցներին։ Այս  
բանի մէջ մեզ համոզում է ի միջի ալլոց և մի  
ոտանաւոր նկարագրութիւն, որի մէջ ասուած է, որ  
բարձր դասակարգին պատկանող բազմաթիւ տի-  
կիններ և տղամարդիկ հաւաքուեցին Վլկսեմ-  
բուրգի պալատը, որպէս զի տեսնեն «Փրանսիացի  
Արքիմեդէսի» ալլ զարմանալի գիւտը։

## ԳԼՈՒԽ Գ.

Պասկալը որպէս բնագէտ և փորձակատար։ — Պասկալի և  
Պէրիէլի փորձերը։ — Պտտակալի աշխատութիւնը հեղուկների  
հստասարակշութեան և ողի ճնշման մասին։

Տասնեօթներորդ դարի սկզբում բնական գիտութիւնները մի տեսակ խառնաշփոթ դրութեան մէջ էին գտնւում։ Արիատոտէլի և Ալքիմիկէսի ժամանակից ի վեր գիտութեան արած առաջադիմութիւնը շատ չնշին էր։

Այն ժամանակուայ ամենատարածուած մոլորութիւններ'ց մինը, որ տիրապետում էր զիտութեան աշխարհում և հասարակութեան մէջ՝ «դատարկութեան երկիր» կոչուած վարդապետութիւնն էր։ Դեռ հին հեղինակներից շատերը իրանց գրուածքների մէջ պնդում էին, իբր թէ բնութիւնը վախենում է դատարկութիւնից։ Վերջերն Արիատոտէլի մեկնիչները երեակալում էին, որ բնութեան անխախտելի ձգտումն է լցնել ամեն մի գոյացող դատարկութիւն։

Ըստ երեսովթին լօգուտ այս վարդապետութեան էին ծառակում այն ժամանակուայ հանրածանօթ շատ փաստեր, օրինակ ջրհանի մէջ ջրի բարձրանալը, արիւնաքաշ բանկալի գործողութիւնը և ազն։ Յակտնի էր, որ հեղուկ և գաղալին մարմինները արագութեամբ լցնում են դատարկ տարածութիւնը։ Միենան ժամանակ երեակալում էին, որ «պատարկութեան երկիւղը» անսահման է։ Կատարելապէս համոզուած էին, որ եթէ, օրինակ, հինգ հարիւր ստնաչափ կամ աւելի բարձրութեամբ ջըրհան կամ խողովակ շինուի և նրա միջից օդը դուրս հանուի՝ այն ժամանակ այն ջուրը, որի մէջ իջեցրած է խողովակի ստորին ծալը՝ կբարձրանալ խողովակով որքան որ մարդ ցանկանում է, անոնց իսկ մինչեւ ամպերը։ Հաւատացնում էին, որ արիւնաքաշ բանկան կարելի է լինում մարմնից բաժանել այն պատճառով, որ նրա մէջ բոլորովին օդ է գտնուում, իսկ եթէ նրա մէջ բոլորովին օդ չըլինի՝ այն ժամանակ «ոչ մի մարդկալին», ոչ էլ հրեշտակալին ուժ չի կարողանայ նրան պոկել։ Մի խօսքով՝ «դատարկութեան երկիւղի» վերաբերմամբ եղած հասկացողութիւնը բոլորովին խառնաշփոթ էր և անորոշ։

Այս դրութեան մէջ էր գտնուում դիտութիւնը Դալլիէլի ժամանակները. բայց մի պատահական դէպք բնագէտներին ստիպեց գործի էութեան մէջ աւելի խորը թափանցել։ Դեռ Դալլիէլի կենդանու-

թեան ժամանակ Ֆլորենցիայի մեծ դուքսի պար-  
ագում շատրուաններ շինող բանուորները, որոնք  
Ջրհանի օգնութեամբ աշխատում էին ջուրը բար-  
ձրացնել՝ զարմանալով տեսան, որ ջուրը միայն 34  
ոտնաչափ է բարձրանում, և որքան աշխատում  
են՝ աւելի չէ բարձրանում, չնայելով որ նրանից  
վերը զեռ էլի դատարկ տարածութիւն կալ: Գալի-  
լէլը դուքսի պալատական մաթեմատիկոսն էր. դի-  
մեցին նորան, որ բացատրէ այս երեսոյթի պատճառը:  
Գալիլէլը որատասխանեց, որ բնութիւնը, ի հարկէ,  
վախենում է դատարկութիւնից, բայց այդ երկիւզը,  
ինչպէս երեսում է՝ 34 ոտնաչափից աւելի չէ տա-  
րածում: Այս կէս-լուրջ պատասխանը, ի հարկէ,  
չէր կարող բաւականութիւն տալ նոյն իսկ իրան,  
Գալիլէլին, ուստի և նա իւր աշակերտներին խոր-  
հուրդ էր տալիս այս հարցը հետազօտելու նպա-  
տակով զանազան փորձեր անել:

Գալիլէլի ամենաընդունակ աշակերտներից  
մէկը, Տօրիչելին կատարեց իւր ուսուցչի ցանկու-  
թիւնը և 1643 թուին փորձեր արեց, Ջրհանի և  
խողովակի մէջ զանազան հեղուկներ բարձրացնե-  
լով: Նա Ջրհանի մէջ ջրի բարձրանալը համեմատեց  
ծանրաչափական խողովակի մէջ սնդիկի բարձրա-  
նալուն հետ և համոզուեց, որ սնդիկը մօտաւորապէս  
44 անգամ ջրից թանձր լինելով՝ բարձրանում է  
44 անգամ պակաս, քան ջուրը: Մըանից Տօրիչել-  
ին եղբակացրեց, որ ինչպէս ջրի, նոյնպէս և ոըն-

զիկի բարձրանալու պատճառը օդալին սխնի ծանրութիւնն է, որը ճնշում է հեղուկի բաց մակերեւութիւնի վրայ: Այսպիսով գտնուեցաւ ծանրաչափը և ակներե եղաւ, որ օդն ևս կարելի է կշռել:

Բայց բաւական չէ գիտենալ, որ սնդիկի բարձրութիւնը ծանրաչափի մէջ կախուած է նրան ճնշող օդի սխնի ծանրութիւնից. անհրաժեշտ է պարզել, ինչպէս է օդի ճնշումը տարածում և ինչպէ է նա զանազանուում, օրինակի համար, կարծր մարմինների ճնշումից: Ամենից անհասկանալի այն էր երեսում, թէ ինչպէս օդի ճնշումը տարածում է, առանց որևէ է կորուստի, ոչ միայն ներքե, այլ և վերև:

Պասկալ' Տօրիչելլիի փորձերի մասին տեղեկացաւ Մերսէննից: Այդ միջոցին նա գտնուում էր իւր հօր մօտ, Ռուանում: Պասկալ' Մերսէննի տուած տեղեկութիւններով վերին աստիճանի հետաքրքրուեց, նա ևս միենուն հարցի վերաբերմամբ ոկրսեց մի շարք փորձեր անել:

Սցո ժամանակները Պասկալ' դեռ ևս ընդունում էր «դատարկութեան երկիւղը», բայց նա այդ համարում էր ոչ թէ մի անսահման ձգտում դատարկութիւնը լցնելու, այլ մի ոյժ, որ ենթարկուում է փոփոխութիւնների, ուրեմն և սահմանափակ է: Ահա թէ ինչ է գրում ինքը Պասկալը իւր առաջին փորձերի մասին:

«Մերսէննի հաղորդած տեղեկութիւնների մա-

սին, որոնք բոլոր գիտնականներին և ուսումնասէրներին զարմանք էին պատճառել՝ ևս իմացաց պ. Պետիից, Ռուանի ամրոցի մթերանոցապետից, որ մի վերին աստիճանի ընթերցաէր մարդ է և այդ փորձերի մասին լսել է Մերսէննից։ Յիշեալ Պետի և ես միասին կրկնեցինք այդ փորձերը, (այսինքն Տօրիչելլիի փորձերը) և գաանք խսկ և խսկ այն ինչ որ գտնուած էր Խտալիալում։ Դրանից յետու այդ հարցի մասին մտածելով՝ համոզուեցի իմ առաջուց ունեցած կարծիքի մէջ, այն է, որ դատարկութիւնը մի ինչ-որ անկարելի բան չէ և որ բնութիւնը ամենեին չէ խորչում դատարկութիւնից այնպիսի երկիւղով՝ որպիսին երեակալում են շատերը։

Պասկալը, մէկ որ այն եղրակացութեան եկաւ, թէ օդի ծանրութիւնը ազդում է ջրհանի վրայ՝ սկսեց այնուհետև ալսպէս մտածել. եթէ այդ պէս է՝ ուրեմն քանի աւելի փոքր է կամ կարճ է սնդիկի վրայ ձնշող օդի սիւնը՝ այնքան աւելի ցածր պիտի կանգնի սնդիկի սիւնը ծանրաչափի մէջ. Ուստի եթէ մենք բարձրանանք որևէ է բարձր սարի գագաթը՝ ծանրաչափը պիտի իջնէ, որովհետև մենք աւելի մօտեցանք մթնոլորտի վերին շերախն և մեր գլխին եղած օդի սիւնը կարճացաւ։

Այս իւր միտքը նա ստուգեց իւր քեռակը Պերիէի օգնութեամբ, որը 1647 թ. Պասկալի յանձնարարութեամբ բարձրացաւ Պիւլ-դը-Դօմ լեռան

գագաթը (Կլերմոնի մօտ): Քանի աւելի էր Պերիէն բարձրանում՝ այսքան աւելի էր իջնում սնդիկը ծանրաչափի մէջ:

Մնում էր միայն բացատրել, ինչ եղանակով է տարածւում օդի ճնշումը: Պասկալին աջողուեց ապացուցանել, որ հեղուկի ճնշումը հաւասար կերպով տարածւում է ամեն կողմ, ուրեմն և վերև, և որ օդի ճնշումը, իւր տարածման եղանակով՝ բոլորովին նման է հեղուկի ճնշումին:

Տօղիչելիի փորձերն ստուգելուց լետոյ՝ Պասկալ՝ պատրաստում էր հեշտուկների մասին մի ընդգարձակ հետազօտութիւն գրելու: Բայց միայն մի համառօտ քննութիւն կաղմեց, և այն էլ տպուեց նրա մահուանից լետոյ:

Պասկալի գիտական աշխատութիւններն ահագին առաւելութիւններ ունին. Նրանք բոլորովին զանազանուում են իւր ժամանակակիցներից շատերի աշխատութիւններից: Պասկալի ոճը պարզ է և հանրամատչելի: Նրա հեղուկների հաւասարակշուութեան մասին գրուածքը կարող են կարդալ մինչև անգամ միայն թուաբանութիւն իմացողները: Օրինակ, նա ջրաբաշխական մամուլի տեսութիւնը ակսպէս է բացատրում. Երեակալեցէք մի անօթ, որը ամեն կողմից փակ է, բացի երկու անցքերից, որոնցից մէկը հարիւր անգամ մեծ է միւսից. Եթէ մենք իւրաքանչիւր ծակի վրայ մի մխոց դնենք, այնպէս որ այդ մխոցները պինդ մանել կարողա-

նան անցքերը, այն ժամանակ եթէ ամանը ջրով  
լիքն է, մը մարդ փոքրիկ մխոցը շարժեալ՝ կարող  
է հաւասարակուել հարիւր մարդու։ Խոկ եթէ մեծ  
մխոցի մօտ 99 մարդ կանգնի, այն ժամանակ մի  
մարդ, որը հրում է փոքրիկ մխոցը՝ կարող է դի-  
մազրել բոլոր 99 մարդկանց։ Սրանից երեսում է,  
ասում է Պատկալը, որ ջրով կամ որեէ այլ հե-  
ղուկով լի անօթը ինքն ըստ ինքեան ներկաւացնում  
է մի նոր ձեփ մեքենայ, որ կարող է ուժը բազ-  
մապատկել այնքան անդամ՝ որքան մեզ հարկաւոր  
է, պէտք է միայն մի անցքը լայնացնել, խոկ միաը  
նեղացնել, դնելով նրանց վրայ և սմապատասխան  
մխոցներ։

Պատկալը մի շարք օրինակներով բացատրում  
է իւր գլխաւոր սկզբունքը, այն է, որ հեղուկների  
ճնշումը հաւասարապէս տարածւում է ամեն կողմ։  
Նա ապացուցում է, որ այս լատկութիւնով պարմա-  
նաւորում են շատ երեսովթներ և բացատրում  
բազմաթիւ կարծեցեալ տարածալնութիւններ։

Պատկալը իւր «Օդի ճնշման մասին» գրուած-  
քում արդէն ուղղակի և զնուաբար «դատարկութեան  
երկիւզի» դէմ է խօսում, ասելով որ այդ երկիւզին  
վերադրուած բոլոր երեսովթները կախուած են օդի  
ծանրութիւնից և հաւասարաչափ տարածուած ճըն-  
շումից։

Պատկալի՝ հեղուկների և գազալին մարմիննե-  
րի մասին արած գիւտերին նայելով՝ պէտք էր

սպասել, որ նա ժամանակով կղառնալ աշխարհիս  
ամենահոչակաւոր փորձակատարներից մէկը։ Բայց  
դեռ այս հանճարաւոր փորձերից առաջ Պատկալի  
կեանքում պատահեց մի գէպք, որ խիստ անլա-  
ջող ազգեցութիւն ունեցաւ նրա մտաւոր փորձու-  
նէութեան վրաւ։

## ԳԼՈՒԽ Գ.

Պասկալի առաջին դարձը ու Պասկալը աշխարհային  
կեանքում:

Դեռ թուաբանական մեքենավի հնարելուց առաջ Պասկալը անդադար հիւանդանում էր և լոգիածութիւնից ու գլխացաւից գանդատում։ Տեղափոխուելով հօր պաշտօնատեղին, Շուան՝ նա սկզբում փոքր ինչ կազզուրուեց, բայց 1646 թուին նրա հօր հետ պատահեց մի դէպք, որ բոլորովին ցնցեց Պասկալի նեարդային դրութիւնը։ Հայրը կառքով դնալիս՝ դժբախտ պատահմունքով ընկաւ, քիչ մնաց որ սպանուի. մահը մազից էր կախուած։ Այս դէպքը այնպէս խիստ ազդեց երիտասարդ Պասկալի վրայ, որ այդ ժամանակուանից նրա մէջ նկատելի եղաւ մի տեսակ փոփոխութիւն. նա չափազանց կրօնասէր դարձաւ։ Ինքը Պասկալը իւր այդ ներքին փոփոխութիւնը «առաջին դարձ» է անուանում։ Ատորե կտեսնենք, որ այս «դարձի» պատճառները բաւական բարդ են։

Պասկալը հէնց մանկութիւնից կրօնասէր էր, բայց մինչեւ այս ժամանակ հաւատի գործերի մէջ չէր արտապատել որևէ եռանդ։ Այժմ մեծ աշխուժով սկսեց կարդալ Սուրբ գիրքը և այլ աստուածաբանական գրքեր։ Իւր սեփական աղարձով՝ չբաւականանալով՝ նա աշխատում է զարձնել» նաև իւր քոլրերին և հօրը։ Նրա մեծ քոլրը, Ժիշերտը, բարեբախտաբար շուտով պատկուեց նոյն Պերիէի հետ, որը օգնում էր Պասկալին նրա փորձերի ժամանակաբան նրա կրտսեր քոլրը, գեղանի և չքնաղ ժակելինը, որ մեծ լուսեր էր տալիս և որի գրած ոտանաւորները արժանացել էին Կօրնէլի գովասանքին՝ շուտով ենթարկուեց եղբօր ազդեցութեանը, սկսեց մտածել աշխարհից հրաժարուելու մասին և վերջապէս վանք մտաւ։ Մինչեւ անգամ հալրն ևս ենթարկուեց որդու ազդեցութեանը, և թէե նա առաջ էլ անաստուած չէր, բայց այժմ նոր եռանդով սկսեց կատարել ծէսերը և եկեղեցի լաճախել։ Պատկալենց ընտանիքի այս տրամադրութիւնից օդտուեցին հոգեռականներից շատերը։ Հէնց այդ ժամանակ նորան խիստ մտերմացան եանսէնեան կոչուած շարժման ղեկավարները։

Երիտասարդ Պատկալը այն աստիճան գրաւուեց իւր կրօնական վարժութիւններով, որ արտապատեց նորահաւատների լատուկ բոլոր առանձնալատիկութիւնները։ Մի դէպքում նա մինչեւ անգամ չքաշուեց պաշտօնապէս մատնութիւն անելուց

մի մարդու մասին, որը նրա կարծիքով կրօնական տեսակէտից վեասակար էր համարւում:

Պասկալի մի քանի կենսագիրներն աշխատում էին արդարացնել նրա այս վարմունքը: Բայց մինչև անգամ Նորիսօն, որ ալսպիսի դէպքերում միշտ ներողամիա կերպով է վերաբերւում Պասկալին՝ նկատում է, թէ առար վարմունքը միշտ ստոր է մնում, թէկուզ նրա կատարողը մինչև անգամ սուրբ լինիու Պասկալին արդարացնում են նրանով, որ նա անկեղծաբար հաւատում էր նոր վարդապետութեան կործանիչ և վեասակար լինելուն. բայց այս դէպքում նա փոխանակ մատնելու՝ կարող էր հրապարակով հերքել նոր ուսմունքը: Միակ մեղմացնող հանգամանքը նրա հիւանդութեան ասահճանի հասած ոգնորութիւնն է, որ աիրապետել էր Պասկալին նրա առաջին «դարձից» լետով.

Քրոջ առելով՝ Պասկալ՝ գեռ մանկութիւնից ողպուանք էր զգում դէպի ժամանակակից նորամուտ ազատամտաթիւնը: Գիտութիւնը և կրօնը Պասկալի համար երկու տարբեր աշխարհներ էին ներկայացնում: Նա որքան քննող և հարցասէր էր մաթեմատիկական և ֆիզիքական հարցերում՝ նոյնքան ևս իւր հարցասիրութիւնը սահմանափակում էր կրօնական հարցերի վերաբերմաքը: Պասկալը լաճախ կրկնում էր, որ կրօնական հարցերն չնքը սովորաբար չէ քննադատում և այս բանը նա պարտական է իւր հօրը, որը մանկութիւնից պնդում

էր իրան, որ այն ամենը, ինչ որ կրօնական է՝ չէ կարող ենթարկուել բանականութեան քննութեանը:

Իւր կեանքի վերջին տարիներն էտիէն Պասկալ՝ թէ, ի մասամբ որդու ազգեցութեան էր ինթարկուել, բայց ինչպէս երեսում է՝ աշխատում էր չափաւորել որդու ծալրալեղ հոգեղմալլութիւնը եզդաստացնել նրան: Որդու հիանդութիւնը լաճախ լուրջ անհանգստութիւն էր պատճառում հօրը:

Թէ որպիսի նեարդարին խանդարումների էին հասցնում Պասկալին նրա բարեպաշտական մարզութիւնները՝ երեսում է նրա գրոջ աղջկայ խօսքերից: «Իմ մօրեղբայրս, գրում է նա, սաստիկ բարեպաշտ կեանք էր վարում: Մի անդամ նա մի տարօրինակ գրութեան մէջ ընկաւ, որ չափազանց մտաւոր զբաղմունքների հետեանքն էր: Նրա ուղեղը այնպէս լոգնած էր, որ գրանից կաթուած պատահեց: Կաթուածը տարածւում էր մէջքից ներքե, այնպէս որ մի ժամանակ նա կարողանում էր ման գալ միայն անթացուպերի օդնութեամբ: Նրա ոտներն ու ձեռները սառ էին մարմարի պէս, և ամեն օր ստիպուած էինք օդու մէջ թաթախած գուլպաներ հագցնել, ոտները զոնէ մի փոքր տաքացնելու համար»:

Տեսնելով այս՝ բժիշկները Պասկալին բոլոր վին արգելեցին պարապել: Բայց նրա առողջ ու զործունեալ միտքը սրարապ մնալ չէր կարող: Չը կարողանալով զբաղուել ոչ բարեպաշտական գոր-

ծերով և ոչ գիւտութիւնով՝ նա սկսեց զուարձութիւնների քետեից ընկնել և աշխարհային կեանք վարել, խաղալ, զուարձանալ: Ակղբում չափաւոր էր բայց հետզհետէ համի ընկաւ և սկսեց ապրել այնպէս՝ ինչպէս բոլոր զուարձանէր մարդիկ:

Այս լեզարջումը Պատկալի կեանքի մէջ բոլորովին անօգուտ չանցաւ: Նա ալդ միջոցին աւարտեց իւր փորձերը ջրակալութեան (գիճուտատիկա) մասին, հնարեց իւր հռչակաւոր թուաբանական եռանկիւնին և հաւանականութեան թէօրիայի հիմքը դրեց:

Սաստիկ մեծ կորուստ կրեց Պատկալը 1651 թ. —վախճանուեց նրա հայրը: Ինքը Պատկալ'ն ասում է, որ եթէ ալդ մահը վեց տարի առաջ տեղի ունենար, այսինքն նրա «առաջին դարձի» ժամանակ՝ ինքը կորած մարդ էր:

Պատկալը աւելի լաճախ սկսեց մտածել իւր մահուան մասին: Դեռ հայրը կենդանի էր՝ երբ նա մի ալօթք գրեց «հիւանդութիւնների լաւ գործածութեան մասին»: Ազգաեղ նա ասում է: «Իմ կեանքը ամօթալի է իւր կատարեալ զատարկութեան և իմ բոլոր գործերիս ու մտքերիս անօգուտ բնաւորութեան շնորհիւ: Ալդ ամբողջ կեանքս մի անընդհատ ժամանակառութիւն էր»: Նա Փիղիքական տանջանքները բոլորովին արդարացի էր համամարում և նախում էր նրանց վրայ՝ որպէս փրկարար պատժի վրայ: Միայն աղաչում է աստուա-

ծութեանը, որ կարողանալ տանջուել՝ որպէս քրիստոնեալ:

Իսկ թէ որչափ հաստատակամ էր Պասկալը ֆիզիքական տանջանքները տանելու մէջ՝ դրա մասին պահպանուել է նրա քրոջ վկայութիւնը:

«Փ միջի այլոց եղբայրս չէր կարողանում ոչ մի հեղուկ կուլ տալ՝ եթէ տաքացած չէր, և այն էլ կուլ էր տալիս կաթիլ կաթիլ։ Որովհետեւ այդ միջոցին նա սաստիկ գլխացաւ ունէր, չսփազանց այրուցք ներքուստ և բազմաթիւ ուրիշ հիւանդութիւններ՝ բժիշկները պատուիրել էին նորան երեք ամիս շարունակ օրամէջ լուծողական ընդունել։ Եւ ահա, նա պէտք է ընդունէր այդ ամեն դեղերը, որ պէտք էր տաքացնել և կաթիլ կաթիլ կուլ տալ։ Ուդ կատարեալ տանջանք էր, և բոլոր նրա մերձաւորների սիրտը խառնւում էր, քայլ նրանից ոչ ոք ոչ մի ամենաշնչին տրտունջ երբէք չէր լսում։»



## ԳԼՈՒԽ Ե.

Պասկալի ծանօթութիւնները:—Ասպետ գլ Մէրէ, գուքս  
Բօնէզ և օրիորդ Բօնէզ:—Պասկալի և Ֆէրմատի գիւղը  
հաւանականութեան թէօրիայի մասին:

Հօր մահից յետոյ Պասկալը իւր ստացուածքի  
կատարեալ աէրը զառնալով՝ մի քանի ժամանակ  
ևս շարունակեց աշխարհիկ կեանք վարել, թէն  
ալժմ քանի գնում աւելի լաճախ էին կրկնուում  
զղջման բոպէներ: Մի ժամանակ Պասկալ՝ նոյն իսկ  
անտարբեր չէր գէպի կանանց հասարակութիւնը:  
Պուատու նահանգում ի միջի ալլոց նա հետամուտ  
էր լինում մի բաւականին կրթուած և զեղանի  
օրիորդի, որը ոտանաւորներ էր զրում և բանա-  
ստեղծուհու համբաւ ունէր ամբողջ նահանգում:  
Բայց Պասկալ՝ աւելի լուրջ զգացմունքներ էր տա-  
ծում գէպի օրիորդ Բօնէզ, որը դուքս Բօնէզի  
քոլըն էր: Դուքս Բօնէզ Պուատու նահանգի նա-  
հանգաւետն էր: Այս վերջինը մի հետաքրքրական  
ախաղ էր այն ժամանակուակ համար, երբ նրբանա-

շակ անառակների կից ողառահում էին մաքրակրօն առաքինի մարդիկ: Դեռ մանկական հասակում հօրից զրկուելով՝ դուքսը կրթւում էր իւր պապի մօտ, որ մի գաւառացի կոպիտ աղնուական էր: Սա իւր թոռան համար զաստիարակ վարձելով՝ ուղղակի հրամակեց նորան՝ երեխային սովորեցնել աղնուականի պէս հայնոյել, որովհետեւ խկական աղնուականը պէտք է իմանալ վարուել իւր ծառաների հետո: Այսու ամենայնիւ երիտասարդ դուքսն այն չելաւ, ինչ որ պատն էր ցանկանում

Դեռ 1647 թուին երիտասարդ Յօանէղ ծանօթացաւ Պատկալի հետ և նրան այնպէս սիրեց, որ միշտ ցանկանում էր նրա հետ լինել և երկար ժամանակով նրանից բաժանուել չէր կարողանում: Գուքսը Պատկալին տեղաւորում էր իւր տան մէջ, անդադար նրա հետ շրջում էր իւր նահանգում և խիստ վշտանում էր՝ երբ Պատկալը փոքր ինչ երկար ժամանակով թողնում էր նրան: Պատկալը ահաղին աղղեցութիւն ունէր դուքսի վրայ:

Այս աղնուականը քսան և հինգ տարեկան հասակում, չնայելով իւր աղղականների լորդուներին և մինչև անդամ սպառնալիքներին՝ հրաժարուեցաւ մի բաւական ձեռնտու ամուսնութիւնից, լետով ծախսեց իւր պաշտօնը, իւր տիտղոսը տուեց աղղականներից մէկին և վճռեց բոլորովին չամուսնանալ:

Դժուար է ճիշտ որոշել, թէ արդեօք դուքսը

Պասկալին երբ է ծանօթացրել իւր քոյր Շարլօտի հետ։ Պասկալ՝ն այնքան լաճախ էր լինում դուքսի մօտ, որ այդ ծանօթութիւնը կարող է պատահած լինել դեռ Պասկալի հօր կենդանութեան ժամանակ։ Յամենայն դէպս, Պասկալը արդէն 1652 թուին սիրահարուած էր Շարլօտ Ռօանէզի վրայ, որովհետեւ նա այդ ժամանակ է գրել իւր «Ճառ սիրային կրքերի մասին» աշխատութիւնը։ Աէրը միայն գրքերից քաղողը այդպէս չէր կարող գրել, և այդ «Ճառը» ամեն տեսակ խոսառվանութիւնից աւելի պերճախօս է։ Խակ ինչ վերաբերում է նրա և օրիորդի միմեանց մէջ ունեցած նամակագրութեանը՝ դրանից շատ բան չէ կարելի խմանալ, որովհետեւ այդ նամակներն աւելի ուշ են գրուել երբ Պասկալ՝ հեռացրել էր իրանից ամեն տեսակ մտքեր երկրագին սիրու մասին։

Իւր «Մտքեր» (Pensées) անուանեալ գրուածքում Պասկալը մի տեղ ասում է. «մարդ որքան ուզենայ կարող է ծածկամիտ լինել. բայց ամեն մարդ էլ սիրում է»։ Այս խօսքերը կարող են կազմել նրա անլաջող սիրոյ բնորոշ լատկանիչը։ Նատ հաւանական է, որ Պասկալը կամ չէ համարձակուել իւր զգացմունքները սիրած օրիորդին լայտնելու, կամ թէ լայտնել է այնպիսի քողարկուած եղանակով, որ օրիորդն ևս իւր կողմից չէ վստահացել լուսոյ մի ամենաչնչին նշով անդամ տալու, թէ ե օրիորդը, եթէ մինչեւ անդամ չսիրէր էլ Պասկալին՝

այնու ամենայնիւ լայտանի է, որ չափազանց լարգում էր նրան։ Հասարակական դիրքերի զանազանութիւնը, աշխարհիկ նախապաշարմունքները և օրիորդական բնական ամօթխածութիւնը թուլ չտուփին նորան լուսաղբել Պատկալին, որը փոքր առփոքր հաշտուեցաւ այն մտքի հետ, որ այդ իշխանազն և հարուստ գեղեցկուհին երբէք իրան չեպատկանի։

Աշխարհիկ կժանքի մէջ մտնելով՝ Պատկալ'ն այնու ամենայնիւ չէր և չէր կարող լինել աշխարհիկ մարդ։ Նա ամօթխած էր, մինչև անդամ երկշոտ և միմնոյն ժամանակ չափազանց միամիտ, այնպէս որ նրա բուռն կերպով արտակարուծ անկեղծ զգացմունքները թւում էին իբրև հասարակ դասակարգին լատուկ անկրթութիւն և անքաղաքավարութիւն։ Դուքս Ռօանէզին և նրա քրոջը շրջապատող իսկական աշխարհիկ մարդկանց մէջ Պատկալ'ն երբեմն ուղղակի անշնորհք և ծիծաղելի էր երեւում, իսկ զուքսին մտերիմ լինելը և նրա վրայունեցած ահազին ազդեցութիւնը շատերին ուղղակի թշնամացրին Պատկալի հետ։ Դուքսի զոնապանուհին ատելով ատում էր Պատկալին, նա այն աստիճան նախանձում էր Պատկալին, իւր տիրոջ մտերիմը լինելուն համար՝ որ մի անդամ խոհանոցի դանակը ձեռին լարձակուեցաւ նրա վրայ և Պատկալը միայն հրաշքով ազատուեցաւ մահից։

Դուքսի մօտ երթնեկող աշխարհիկ անձնաւո-

յութիւնների մէջ կալին շատ պճնասէր երիտասարդներ, ինչպէս լայտնի Փրանտ և անմիտ Միտոն, սրանից աւելի խելացի, բայց լանգուգն և վերին աստիճանի մնափառ ասպետ դը-Մէրէ:

Պէտք է խոստովանել, որ մաթեմատիկալի պատմութիւնը մասամբ պարտական է ասպետ դը-Մէրէին նրանով, որ ասպետը սպասափելի սիրում էր զառ խաղալ (Արա ՅԵ ԿՈՏԻ): Առանց այս հանգամանքի՝ հաւանականութեան թէօրիան մի դար ևս կարող էր ուշանալ:

Խաղի սիրահար լինելով՝ դը-Մէրէ խիստ հետաքրքրում էր այն հարցով, թէ արդեօք ինչպէս պէտք է բաժանել վեր եկած փողը խաղացողների մէջ այն դէպքում, երբ խաղը դեռ չէ վերջացել: Այս հարցի վճիռը չէր ենթարկում այն ժամանակուալ լայտնի մաթեմատիկական եղանակներին:

Մաթեմատիկոսները սովորաբար վճռում էին այնպիսի հարցեր, որոնք վճռուում էին կամ հաստատապէս, կամ գոնէ մօտաւորապէս: Խոկ այժմ պէտք էր վճռել, թէ խաղացողներից որը կարող էր տանել՝ խաղը շարունակելու դէպքում: Պարզ է, որ այսուղ խօսքն այնպիսի հարցի մասին է, որի վճիռը պէտք է որոշուէր խաղացողներից մէկի կամ միւսի տանելու կամ տարուելու հաւանականութեան աստիճանով:

Բայց մինչեւ այդ ժամանակ ոչ ոքի մտքով չէր անցել, որ լոկ հաւանական դէպքերն ես կա-

րելի է հաշուել, կարծում էին, որ այդպիսի խընդիրները լուծելու համար պէտք է բախտի դիմել, ամսինքն պէտք է վիճակ ձգելով որոշել, թէ խաղացողներից որը պէտք է վերջնականապէս տանի:

Միայն Պատկալի և Ֆէրմատի հանճարը կարող էր հասկանալ, որ այդ տեսակ խնդիրները կարելի է որոշակի վճռել, և որ «հաւանականութիւնն» նո թուաբանական հաշիւների ենթարկուող քանակութիւն է:

Դիցուք պէտք է խմանալ, թէ ո՞րքան հաւանական է ձերմակ դուդակը հանել այն քուէտուփից, որի մէջ կաէ երկու ձերմակ և մի սև գընդզակ: Ընդամենը երեք գնդակ է, և ձերմակը սեխց երկու անդամ աւելի է: Հաւանական է ենթադրել, որ եթէ յաջողակի հանելու լինինք՝ աւելի շուտ ձերմակը դուրս կգաէ քան սեր: Կարող է պատահել, որ սեը հանենք. բայց այնուամենալիւ իրաւունք ունինք ասելու, որ այս դէպքի հաւանականութիւնն աւելի քիչ է, քան ձերմակինը: Եթէ ձերմակ գնդակների թիւը շատացնենք, իսկ սեը նոյնը թողնենք՝ պարզ է որ սև գնդակը հանելու հաւանականութիւնը աւելի կքչանալ: Օրինակ, եթէ 1000 հատ ձերմակ գնդակ լինի ու մի սև, և մի խաղացող դրազ զաէ, որ սև գնդակը պիտի հանէ և ոչ ձերմակը՝ այն ժամանակ նա կամ խելքը թոցրած պիտի լինի, կամ սարսափելի խա-

զամոլ, որ վճռէ որևէ նշանաւոր գումար վեր դաւ յօգուտ սև գնդակի:

Հաւանականութիւնը չափելու մասին պարզ դաղափար կազմելով՝ հեշտ է հասկանալ, թէ Պասկալը ինչ կերպ վճռեց գը-Մէրէի առաջարկած խնդիրը։ Ակներեն է, որ հաւանականութիւնը հաշուելու համար պէտք է արուած հարցի լաջող գէպքերի թիւը համեմատել բոլոր թէ լաջող և թէ անդաջող գէպքերի թուի հետ։ Այս երկու թուերի լարաբերութիւնը կլինի պահանջուած հաւանականութիւնը։ Օրինակ, եթէ 100 հատ ճերմակ գնդակ է, 10 սև այն ժամանակ ընդամենը 110 դէպք կլինի, որոնցից 10-ը յօգուտ սև գնդակների է։ Աւստի սև հանելու հաւանականութիւնն է  $\frac{10}{110}$  կամ  $\frac{1}{11}$ ,

Ասպետ գը-Մէրէ երկու խնդիր էր առաջարկել. առաջինով պահանջում էր խմանալ, թէ քանի անգամ՝ պէտք է ձգել զառերը՝ որպէսզի լուսունենանք ստանալու աչքերի (ՕՎԿՕ) ամենամեծ թիւը, այսինքն 12. Երկրորդը պահանջում էր որոշել, թէ ինչպէս պէտք էր վեր եկած դրամը բաժանել խաղացողների մէջ՝ երբ խաղը չէ վերջացել։ Առաջին խնդիրը համեմատաբար հեշտ է. միայն պէտք է հաշուել, թէ քանի տեսակ զուգագրութիւն կարող է պատահել. այս զուգագրութիւններից միայն մէկը կլինի յօգուտ որոնուող

դէպքի, իսկ մնացեալները ոչ ալսաեղից շատ  
պարզ է որոշել հաւանական դէպքը։ Երկրորդ խըն-  
դիրը բաւական դժուար է։ Այս երկու խնդիրները  
միաժամանակ վճռել են Ֆէրմատ և Պասկալը, ա-  
ռաջինը Տուլուզում, իսկ երկրորդը Պարիզում։ Այս  
խնդրի առիթով 1654 թուին Պասկալի և Ֆէրմատի  
մէջ նամակագրութիւն տեղի ունեցաւ, և նրանք  
միմեանց հետ անձամբ ծանօթ չլինելով՝ ամենա-  
մօտ բարեկամներ դարձան։ Ֆէրմատ երկու խըն-  
դիրներն ես վճռեց իւր հնարած զուգագրու-  
թեան տեսութիւնով։ Պասկալի վճիռն ան-  
համեմատ աւելի պարզ է։ Նա զուտ թուաբանա-  
կան հաշիւներով էր վճռում։ Պասկալ՝ ամենեին  
չնախանձեց Ֆէրմատին։ Նա ընդհակառակը խիստ  
ուրախացաւ, որ Ֆէրմատն անկախ կերպով նոյն  
եղրակացութեան է հասել՝ որին որ ինքը։ Նա  
գրում է. «Այսուհետեւ ես կցանկանալի բանալ ձեր  
առաջ իմ սիրտն ու հոգին։ անչափ ուրախ եմ, որ  
մեր մտքերն ընդառաջել են միմեանց։ Տեսնում  
եմ, որ ճշմարառթիւնը միենոլնն է թէ Տուլուզում  
և թէ Պարիզում։

Ահա Պասկալի վճիռը համառօտ կերպով։

Դիցուք թէ, ասում է Պասկալը, երկու խաղացոք  
խաղում են։ Խաղը վերջացած է համարւում այն ժամա-  
նակ՝ երբ նրանցից մէկը երեք խաղ է տանում։ Դիցուք  
թէ իւրաքանչիւրը 32 ոսկի է դրել եւ ենթադրենք, որ  
առաջինը տարել է երկու խաղ (սրան պակասում է մէկը)։

իսկ երկրորդը՝—մէկ խաղ (սրան պակասում է երկուսը): Նրանց մնում է մէկ խաղ եւս խաղալ: Այս խողը եթէ առաջինը տանի՝ կստանայ ամբողջ գումարը, այսինքն 64 ոսկի, եթէ երկրորդը տանի՝ այն ժամանակ իւրաքանչիւր խաղացող երկու խաղ կլինի տարած, երկուսն եւս խաղը տանելու հաւասար յոյս կունենան, ուստի եւ ակներեւ է, որ խաղը դադարացնելու դէպքում վեր եկած զրամը պէտք կլինի հաւասարապէս նրանց մէջ բաժանել:

Այսպէս ուրեմն, եթէ երկրորդ խաղը առաջինը տանի՝ կստանայ 64 ոսկի, իսկ եթէ երկրորդը տանի՝ այն ժամանակ առաջինը կստանայ միայն 32 ոսկի: Ուստի եւ, եթէ երկուսն եւս համաձայն են հետեւեալ խաղը չխաղալ՝ այն ժամանակ առաջինն իրաւունք ունի տաելու: Ես յամենայն դէպս 32 ոսկի կստանամ, մինչեւ անգամ եթէ ես տարուիմ հետեւեալ խաղը, որը մէնք համաձայնուել ենք վերջինը համարել: Կնշանակէ՝ 32 ոսկին իմս է: իսկ մնացեալ 32 ոսկին կամ ես կտանիմ կամ դրէք: Ուստի եւ պէտք է այս կառկածելի գումարը մեր մէջ կէս անենք, Այսպէս ուրեմն, եթէ խաղացողները բաժանուին, վերջին խաղը թողնելով՝ այն ժամանակ՝ առաջինին պէտք է տալ 48 ոսկի, կամ ամբողջ գումարի  $\frac{3}{4}$  մասը, երկրորդին՝ 16 ոսկի կամ  $\frac{1}{4}$ -ը, որից երեւում է, որ առաջին խաղացողի տանելու հաւանականութիւնն երեք անգամ աւելի է քան երկրորդինը (եւ ոչ երկու անգամ, որպէս կարելի է կարծել՝ ոչ խորը մտածելով):

Ակներեւ է, որ հաւանականութեան տեսութիւնը, թէօրիան, մեծ դիւրութիւններ տուեց մա-

թեմատիկալին և ներկալումս ահագին գործադրութիւն ունի: Սրա միջնորդութեամբ աստղագէտները որոշում են իրանց գիտողութիւնների հաւանական սխալները: Թնդանօդաձիգները հաշում են ռումբերի այն հաւանական քանակութիւնը, որը կարող է ընկնել որոշ տարածութեան վրայ: Բնագէտները որոշում են գաղափին մարմնի այն մասնիկների թիւը, որոնք ընդհարւում են անօթի պատին: Ապահովագրող ընկերութիւնները հաշում են այն պրեմիաների և տոկոսների քանակութիւնը, որ ստացւում են կեանքի և ստացուածքի ապահովագրութիւնից: Առհասարակ այնպիսի գէպերում, որտեղ երեսովթները չափաղանց բարդ են, որպէսզի կարողանանք բացարձակ արժանահաւատ հախաղուշակութիւն անել՝ հաւանականութեան թէօրիան մեծ գեր է խաղում: Նրանով մենք կարողանում ենք որոշել այնպիսի եզրափակութիւններ, որոնք խիստ մօտ են ճշտութեան և բոլորովին պիտանի գործնական աշխարհում:



## ԳԼՈՒԽ Զ.

Պատկալի ներկրորդ դարձը: — Նրա ռկտակը: — Խելտադը էք արդեօք Պատկալը: — Թօրու բօյեալ: — Ժակելինի աղղեցու-  
թիւնը:

Դեռ 1654 թուի հոկտեմբերին Պատկալը խիստ եռանգուն գրադրութիւն ունէր Ֆէրմատի հետ հաւանականութեան թէօրիալի մասին. մի քանի շաբաթից լետով Պատկալին մի փորձանք պատահեց, որն անկառկած նրա վրայ խիստ մեծ աղղեցութիւն արեց. Սակայն չէ կարելի պնդել, որ Պատկալի կենցաղավարութեան փոփոխութիւնը կատարուել է լանկարծակի, միայն այս դէպէի աղղեցութիւնից:

Մէկ տօն օր Պատկալ՝ քառաձի կառքով ըղ-  
բօնում էր իւր բարեկամների հետ: Երբ կառքը  
հասաւ Նելլի կոչուած կամուրջի աջն մասը, ուր  
վանդակապատ չէր քաշուած՝ ձիաները խրանեցին,  
և մի ակնթարթում ջուրը թափուեցին, քեզին

(ՃԵԱՋ) կոտրուեց և կառքը կանգ առաւ ան-  
դունդի հէնց ծալրին:

Այս դէպքը խիստ ցնցեց առանց աշն էլ  
ջղալին Պասկալին: Նատ կարելի է, որ Պասկալը  
մի քանի շաբաթ, մինչև անգամ մի քանի ամիս  
շարունակ տանջուել է անքնութիւնից և զառան-  
ցանքներից: Արբահայր Բուալօ դրականապէս հե-  
տեսեալն է պնդում: «Մեծ մտածողը միշտ (?) երե-  
ւակալում էր, որ իւր ձախ կողմին անդունդ էր  
տեսնում: Նա միշտ իւր ձախ կողմը մի աթոռ էր  
դնում, որպէսզի ինքն իրան հանգոտացնէ: Նրա  
բարեկամները, նրա խոստովանակարը, նրա մե-  
ծաւորը (այսինքն արբահայրը, որը Պօրտ-Թօւեալի  
եանսէնական ապաստանում նրա դաստիարակն  
էր), լաճախ նրան համոզում էին, որ վախենա-  
լու բան չկայ, որ դրանք ցնորդներ են, որոնք  
առաջ են եկել նրա վերացական մտածմունքնե-  
րով լողնած երեակալութիւնից: Նա համաձայն-  
նում էր, բայց քառորդ ժամ չանցած՝ կրկին աե-  
սնում էր անլատակ անդունդը, որը վախեցնում էր  
նրան»:

Արբահայր Բուալօի այս ցուցմունքն աւելի  
կարեոր է նրա համար, որ ինչպէս երեսում է՝  
նորան լայտնի չէր Նելլի կամուրջի դէպքը: Դըժ-  
ուար է ենթաղրել, որ արբահայրն իրանից հնա-  
րած լինի Պասկալին վերագրած զառանցանքները,  
որոնք ակնխայտնի կապ ունին վերոլիշեալ դէպքի

հետ։ Բայց և ալնպէս ամենեին չէ կարելի հաւատալը, որ Պատկալ՝ «միշտ», ինչպէս պնդում է աբբահալը, պաշարուած լինէր զառանցանքներով ու ցնորքներով։

Տաս։ Կութերորդ դարու վիլխառիաները Պատկալին խելագար էին համարում։ այս, ի հարկէ, չափազանցութիւն է։ Բայց նրանցից աւելի ուղիղ չեն դատում և այն հեղինակները, որոնք առանց ալլելութեան ժխտում են աբբահալը Բուալօվի պատմուածքը, որն իր թէ նսեմացնում է Պատկալի լիշտակը, կարծես թէ ջղալին խանուպարումը մի արատ կամ լանցանք է։

Ալտքանը միայն հաստատ է, որ Պատկալի պապէս անուանեալ «երկրորդ դարձի» պատճառը բացառապէս նելլի կամուրջի վրայ պատահածդեպը չէր, այլ մի չարք աւելի խորը պատճառներ։ Մտաւոր զործունէութեան չափազանց լարումը, ընտանեկան ուրախութիւնների և վայելչութեանց բացակալութիւնը, եանսէնական \*) աղանդին հետեւող բարեկամների աղղեցութիւնը, անչածող սէրը և մշտական հիւանդութիւնները—այս բոլորը միանալավ նրա կրօնական բուռն ձգումների հետ՝ ակնչալանի կերպով բացատրում են Պատկալի վերջնական «դարձը»։ Բաց՛ դրանից՝

\*) Եանսէնական կոչում են Կիպրոսի եպիսկոպոս և անսէնի հետեւողները։ Այս եպիսկոպոսը մարդու մէջ ամերի աղատութիւն չէր ընդունում։

Պատկալի կրօնական հոգեզմալլութիւնն առնասարակ երևան էր գալիս չափազանց լարուած զբաղմունքներից լետով. սա մի րէակցիա, մի լեզարդումն էր նրա հոգեկան դրութեան մէջ. Պատկալը առաջին անգամ ալս զրութեան մէջ ընկաւ թուաբանական մեքենալի և ջրաբաշխութեան առթիւ արած աշխատանքից լետով, երկրորդ անգամ՝ հաւանականութեան թէօրիան կազմելուց լետով. Երբ որ Պատկալի Փիղելքական և մտաւոր ոլժերը վերջնականապէս սպառւում էին՝ ալն ժամանակ նա միայն կրօնական զաղափարների մէջ էր հանգիստ գտնում, կրօնական մթնոլորտի մէջ էր ապրում և մտածում. Նոյն-իսկ Փիղելքական տանջանքները, որոնք կործանիչ աղղեցութիւն էին անում նրա մտաւոր կարողութիւնների վրա՝ խոչընդուռ չէին լինում նրա կրօնական հոգեզմալլութեան, սպէսնդհակառակն աւելի գրգռում էին. Այս տեսակետից կ սրելի է ասել, որ Պատկալի ջերմեռանդութիւնը ոերտ կերպով կապուած էր նրա հիւանդութիւնների հետ:

Անկասկած, բացի շրջապատողների աղղեցութիւնից և 17-երորդ դարու զաղափարներից՝ Պատկալի աղարձին» նախասեցին և ալլ խիստ բարդ հոգեբանական պատճառներ. որանք ասաիմանաբար նախապատրաստում էին ալլ լեզարդումն, որի մէջ կամուրջի գէպքը միալն մի ուժգին դըրդիչ էր, աւելի ոչինչ. Յաբանի է, որ խկական

«գարձը» կատարուել է 1654 թուի նոյեմբերին, մի զարհուրելի գիշեր, երբ Պատկալը ներքին մաքառումների և անքնութեան շնորհիւ հոգեղմակլութեան մէջ ընկաւ, ճիշտ այնպէս՝ ինչպէս պատահում է մը քանի լուսնուտների և ուշաթափուողների հետ — մի դրութիւն, որի պատկերը Պօստելիկին սքանչելի կերպով նկարել է իւր «Ապուշ» („Ածոյթ“) անուանեալ գրուածքում։ Այս հոգեզմայլութեան ազդեցութեան տակ, Պատկալը գրեց մի տեսակ խոստովանութիւն կամ կտակ՝ որը կարեց իւր հագուստի աստառում և այնուհետեւ միշտ իւր վրայ էր կրում։ 18 երրորդ դարու Փիլիսոփաներն այդ խոստովանութիւնը խելագարի զառանցանքները էին համարում։ Պատկալին պաշտպանողները՝ կրօնական ծրագիր են համարում այդ կտակը. ասում են, որ դա հաւատոյ հանգանակի նման մի քան է։

Խոկապէս այս խոստովանութիւնը մի անկատ և սղմուած ծրագիր է Պատկալի կրօնաբարոյական համոզմունքների, միայն այնպիսի ծրագիր, որը նա գրել է ոչ թէ լրջօրէն մտածելով, այլ համարեամովգալաբար, համարեա զառանցանքների մէջ։

Ահաւասիկ այդ խոստովանութիւնը, որն առաջին անգամ հրատարակել է լայտնի Փիլիսոփայ Կօնդօրակէ «Պատկալի համալիլը» վերնագրով։

Աստուծոյ ողօրմութեան թիւ 1654, երկուշաբթի, 23-ին նոյեմբերի, ս. Կղեմէս մարտիրոսի եւ սլապի եւ

այլ մարտիրոսների օրը։ Մօտաւորապէս երեկոյեան ժամը  $10\frac{1}{2}$ -ից մինչեւ  $12\frac{1}{2}$ ։ (Պատկալը որպէս մաթեմատիկոս՝ իւր հոգեզմալութեան տևողութիւնը որոշում է կէս ժամի ճշտութեամբ)։

Ն ն շ ե ց ե ա լ.

Աստուած Աքրահամու, Խասհակայ եւ Յակոբայ, բայց ոչ Աստուած փիլսոփայից եւ իմաստնոց,

Ստուգութիւն։ Զգացմունք։ Խնդութիւն։ Խաղաղութիւն։ Աստուած Յիսուսի Քրիստոսի։ Քո Աստուածը կը լինի եւ իմ Աստուածը։ Մոռանալ աշխարհը եւ ամեն ինչ, բացի Աստծուց։ Նրան գտնել կարելի է միայն Աւետարանի մէջ յայտնուած ճանապարհով։ Մարդկային հոգով վերութիւն։ Հայր արդսրադատ, աշխարհը քեզ չէր ճանաչում, բայց ես քեզ ճանաչում էի։ Խնդութիւն, խնդութիւն, խնդութիւն։ Խնդութեանց արցունքներ։ Ես նրանից բաժանուեցի, թողեց ինձ կենդանի ջրի աղբիւրը։ Աստուած իմ, թողնելու ես ինձ։ Ես յաւիտեան չբաժանուեցի նրանից։ Յիսուս Քրիստոս, Յիսուս Քրիստոս։ Ես նրանից բաժանուեցի։ Ես փախայ նրանից, խաչեցի նրան, ուրացայ։ Ես երբէք նրանից չեմ բաժանուի։ Նա պահպանում է միայն Աւետարանի մէջ աւանդուած ճանապարհներով։ Կատարեալ եւ բաղցը հրաժարում աշխարհից։ Կատարեալ հպատակութիւն Քրիստոսին եւ իմ հոգեւոր մեծաւորին։ Յաւիտեանական ուրախութիւն մի օրուայ աշխատանքի համար աշխարհիս երեսին։ Թող չմոռանամ Քո պատուէրները։

Ամէն։

Ի հարկէ, ալս խոստովանութիւնը խելագարի ղառանցանք չէ, թէև նման է նորան։ Հազիւ թէ դա համայիլ կամ թալիսման ևս լինի, որի նպատակն է աղաս պահել ամեն աեսակ փորձանքներից։

Հաւատի մէջ Պատկանը՝ չափաղանցութեան հասաւ, և զրա համար շատ հաւանական է ենթադրել, որ նա հաւատար մի կտոր թղթի կամ մագաղաթի խորհրդաւոր ոչին—նա իւր խոստովանքն երկու այսպիսի կտորի վրայ էր զրել։ Բայց չէ կարելի պնդել, որ նրա ալս անկապ խոստովանքը միայն իբրև թալիսման է ծառայել Պատկալի համար։ Սրա նշանակութիւնն ակներեն է, առ հոգեկան լեզափոխութեան արտաքայտութիւն էր սրանով նա իրան վկայում է, որ այնուհետեւ ինքը նոր կեանքով պիտի ապրի։ Եւ լիրաւի, Պատկալի խոստովանութիւնը միայն թղթի վրայ չմնաց, առ նրա կեանքի վերջին վեց-եօթը տարիների խոկական ծրագիրն է։ Պատկալի խելագարութեան դէմ ամենալաւ փաստն այն զրական պալքարն է, որն ալդ ժամանակ նա վարեց եղուիտների դէմ։

Վերոգրեալ լեզարջման նախաղատրաստութիւնն սկսուել էր գեռ 1654 թուից։ Դեռ լիշեալ նովեմբերեան գիշերից շատ առաջ, նոյն թուի օեպահեմբերին, Պատկալը իւր ախրաը բացեց կըրտսեր քրոջ՝ Ժակելինի առաջ այնպիսի խղճալի եղանակով, որ ցնցեց նրան մինչև հոգու խորքերը։

Առհաստարակ Ժակելինը իւր եղբօր մերկրորդ

դարձիո մէջ նշանաւոր զեր է կատարել։ Քոյլը  
միայն վճարեց եղբօրը իւր սեփական դարձի փո-  
խարէն, որը տեղի էր ունեցել Պատկալի ազգեցու-  
թեան տակ։ Փոքր զեր չէ կատարել նաև օրիորդ  
Ռօանէզի հետ ունեցած մտերմութիւնը։ Այս օրիորդն  
և Պատկալի հետ ունեցած խօսակցութեան և նրա  
նամակների ազգեցութեան տակ հեռացաւ աշխար-  
հից։ Խւր կեանքի ամենակրիտիքական ժամանա-  
կամիջոցում, երբ Պատկալը տատանւում էր սիրու  
և կրօնական ողջախոնութեան մէջ՝ նա դիմեց  
Ժակելինի խորհրդին ու մխիթարութեանը։ Հեշտ է  
գուշակել, թէ ինչ խորհրդիներ կարող է տալ  
չափաղանց զմավլուած ազջիկը, որը վանք մտնե-  
լով խորտակել էր խւր սեփական երիտասարդու-  
թիւնը։

Դեռ 1653 թուի ամառը Ժակելինը զրում է իւր  
մեծ քրոջ ամուսնուն, որ խւր թշուառ եղբօր մասին  
արած ազօթքները լսելի պիտի լինին։ Թէ որչափ Պատ-  
կալը սկսեց ենթարկուել իւր քրոջ ազգեցութեանը,  
քրոջ, որը բաւական նմանում էր եղբօրը թէ խել-  
քով, թէ տաղանդով և թէ արտաքինով՝ այս երեսում է  
այն հանգամանքից, որ երբ Պատկալ՝ վերջապէս մտաւ  
Պօրտ-Բօլեալ \*) և վերատեսուչ Սէնդլինի զեկավա-

\*) Պօրտ-Բօլեալ գտնւում էր Պարեզի Սին-Ժակ ա-  
նուանեալ արուարձանում։ Մինչեւ այժմ էլ այնտեղ մի  
քաղաքային այգի կայ նոյն անունով։ Այս արուարձանը  
դաշտում է Լոտինական թաղի մօտ։ Այսակ կային կու-

րութեամբ ապաշխարում էր, այս վերջինը հյւանդանալով՝ Պատկալին յանձնեց քոյր Աւֆիմէի խնամատարութեան։ Իսկ Եւֆիմէն ոչ այլ ոք էր՝ եթէ ոչ Փակելինը, որն այս եանսէնական համապնդի մէջ լաւանի էր այդ անունով։

1654 թուի աշնանը Պատկալը այնքան յաճախ էր այցելում Ժակելինին, որ այս վերջինի ասելով՝ նրանց խօսակցութիւններից կարելի էր մի ամբողջ հատոր կազմել։ Այս ամենը պարզ ցոյց է տալիս, որ Նելլի կամուրջի դպրքը Պատկալի գարձի միայն մի դրդիչն էր, և այս դրդիչն աւելի ուժեղ չէր քան այն, որն զգացել էր նա մի քարոզի ժամանակ դեռ այն խորհրդաւոր գիշերից մի քանի ժամանակ անցնելուց լետով, այն նոյեմբերեան դիշերից, երբ Պատկալը հոգեզմակլութիւնից ու ջերմեռանդութիւնից շնչասպառեզած գրեց իւր կտակը կամ խոստովանանքը։ Պատկալ՝ 1654 թուի վերջին իւր բնաւորութիւնը վերափոխելու համար ամիսներ գործ գրեց, և արդէն 1655 թուի սկզբում նա երկրապագում էր այն ամենին, ինչ որ խորհրդաւոր էր, գերբնական էր։ Նա միտիք էր, բառի բուն նշանակութեամբ։

---

սանաց վանք, Ճգնաւորների խցեր, մինչեւ անգամ՝ զըավաճառանցներ և տպարաններ, որոնք բոլորը պատկանում էին եանսէնականներին։

## ԳԼՈՒԽ Է.

Ե անսէնականների պատմական տեսութիւնը: — “Նամակ-  
ներ գաւառապետներին”:

---

Դեռ իւր առաջին աղարձից ժամանակ՝ Պատ-  
կալը խիստ մտերմացաւ մի քանի եանսէնական-  
ների հետ: Իւր կեանքի վերջին տարիները նա-  
եանսէնական շարժման ամենաեռանդուն մաքա-  
ռողներից մինն էր:

Եանսէնականութեան հիմնադիրը հոլլանդացի  
Կարլոս Յանսէնն էր, որը 17-երորդ դարու սկզբ-  
բում Կիպրոսի եպիսկոպոս էր. սա անարատ վարք  
ու բարքի տէր մի անձն էր, եղուխաներին ոխե-  
րիմ թշնամի լինելով՝ նա իւր ամբողջ կեանքում  
մաքառում էր նրանց վարդապետութեան դէմ,  
եղուխտների բարուականութեան դէմ: Այդ ժամա-  
նակներն եղուխտականութեան զեկավարներ էին  
համարւում Լեսսի և Մօլինա: Այս վերջինի անու-  
նով չատ անգամ եղուխտներին մօլինիստներ էլ  
էին կոչում:

Մինչդեռ եղուկաները պնդում էին, որ «ողորմութիւնը» բոլոր յրիստոնեաների համար է, և որ ամենածանր մեղքերն անգամ կարելի է քաւել ապաշխարութեամբ՝ Եանսէն ապացուցում էր, որ «ողորմութիւնը» միայն ընտրեալների համար է և իւր հետեւղներից պահանջում էր ամենախիստ առաքին ութիւն։ Եանսէնի վարդապետութիւնը շատ կէտերում նման է կալվինականութեան։

Եանսէնականութիւնը խիստ արագ տարածուեց Ֆրանսիակառում, մանաւանդ Պարիզում։ Բազմաթիւ նշանաւոր գիտնականներ, ինչպէս աշխարհականներ, նոյնպէս և հոգևորականներ՝ բնակութիւն հաստատեցին Պօրտ-Ռօյեալում, Լատինական թաղի մօտ. որանք իրանց ճգնաւորներ (solitaires) էին անուանում և միայնակեաց կեանք վարելով՝ զբաղւում էին աստուածաբանական հարցերով, ձեռքի աշխատանքով և երեխաների կրթութեամբ։ Արհօ, դուքս զը Լիանկուր և վերջերը Պասկալը ալդ աղանդի աչքի ընկնող ներկայացուցիչներն էին։

Եղուկաները զարգացան։ Բացի եանսէնականների դաւանաբանական և բարուախօսական հարցերից՝ եղուկաները խիստ վախենում էին մրցումից, աչքի առաջ ունենալով զուտ նիւթական շահը։ Քանի որ եանսէնականութիւնը չկար՝ բոլոր գպրացները եղուկաների ձեռքին էին. ալժմ Պօրտ-Ռօյեալում հիմնուեցին եանսէնականների դպրոցներ, ուր սկսեցին լաճախել միջին դասակարգի և

աղնուականների երեխաններ։ Եանսէնականների մօտ խոստովանքի էին գալիս Պարիզի ամեն ծայրերից։ Նրանց հետեղողների մէջ կալին նաև շատ պալատականներ։ Այ մի սարսափելի հարուած էր եզուիանների խոստովանարանների և դպրոցների համար։

Եանսէնականների և եզուիանների մաքառումը Պարիզում սկսուել էր դեռ 1643 թուին, երբ եզուիանները քարոզչական ամբիոններից լայսարարեցին, որ Եանսէնը «եփած կալվին է», իսկ նրա աշակերտները՝ «Ժէնէվեան ճահճի տղմի մէջ ծնուած գորտեր»։ Տասը տարի լետոյ, պապ Իննոկենտիոս Փ եզուիանների թելադրութեամբ մի բուլլա — կոնդակ — հրատարակեց, որի մէջ դատապարտում էր Եանսէնի վարդապետութիւնը՝ որպէս հերետիկոսութիւն։ Յետոյ, աւելի ուշ, հէնց այն ժամանակները, երբ Պատկալը Պօրտ-Ռօլեալում սկըսեց իւր ճգնաւորական կեանքը՝ դարձեալ մի ընդհարում տեղի ունեցաւ, որը դզբողեց ամբողջ Պարիզը։

Եանսէնականների գլխաւորներից մէկը, Արնօ «Մի անուանի անձի ուղղուած» նամակ գրեց, որի մէջ խիստ լանդիմանում էր այն եզուիանն, որը մեղքերի թողութիւն չէր տուել այնպիսի մի պատկառելի մարդուն, որպիսին էր դուքս դը-Լիանկուրը։ Այն ժամանակ եզուիաններն ես իրանց կարգին Արնօի դէմ մի շարք պարսաւանքներ հրատարակեցին։ Արնօ պատասխանեց մի նոր նամա-

կով՝ ուղղուած «Ֆրանսիակի պէրին» (բարձր ազ-  
նուականին): Վիճաբանութիւնը եկեղեցու ամ-  
բիոնից անցաւ Սօրբօնի ամբիոնը, և 1655 թուի  
գեկտեմբերի 1-ից մինչև 1656 թուի լունսուարի  
31-ն այս գիտութեան տաճարում տեղի ունեցան  
մի շարք աղմկալուղ ընդդիմախօսութիւններ:

Այն ժամանակուալ Պարիզի հասարակութիւնը  
խիստ հետաքրքրում էր այսպիսի բանակուիւնե-  
րով, ձիցտ այնպէս՝ ինչպէս այժմ հետաքրքրում է  
քաղաքական կարեւոր հարցերով: Պասկալ՝ ևս սառ-  
նասրտութեամբ չվերաբերուեց այս գիճաբանու-  
թեանը: Մէկ անգամ գտնուելով իւր բարեկամ  
ների, Պօրտ-Ռօւեալի ճգնաւորների շրջանում՝ Պաս-  
կալ՝ սաստիկ հետաքրքրուեց իւր խօսակիցներից  
մի քանիսի կարծիքներով: Նրանցից մէկն ասաց,  
որ անհրաժեշտ է գործի էութեան անծանօթ հա-  
սարակութեանը բացատրել, որ Սօրբօնի մէջ տեղի  
ունեցող բանակուիւնները հիմնուած են ոչ թէ հաս-  
տատուն փաստերի, այլ խաբուսիկ և դատարկ  
հնաբքների վրայ: Ամենքը միասին հաւանութիւն  
տուին այս կարծիքին և պնդեցին, որ Արնօ մի  
լուրջ պաշտպանողական ճառ գրէ. «Միթէ, ասում  
էին նորան, թո՞լ կտաք, որ ձեզ փոքրիկ աշակեր-  
տի նման դատապարտեն, և ձեզ արդարացնելու  
համար ոչ մի խօսք չէք ասի, թէկուզ հէնց նրա  
համար, որ հասարակութեան ծանօթացնէք, թէ  
բանն ինչումն է խակապէս: Արնօ փորձեց մի բան

գրել, և գրուածքը կարդաց իւր բնկերների շրջանում. բայց ոչ ոք հաւանութիւն չտուեց այս զըրուածքին։ «Տեսնում եմ, ասաց Արնօ, որ այս զըրուածքը դուք չեք հաւանում. իսկապէս ես ինքու էլ զգում եմ, որ այսպէս չպէտք է զրելու Եւ դառնալով Պատկալին՝ աւելացրեց. «Իսկ դուք երիտասարդ եք, դուք պէտք է մի բան անեք»։ Պատկալը, որ դեռ իւր ովքերը չէր փորձել այս առպարիզում՝ ասաց, որ կաշխատի ալդ հարցի ծրագիրը կազմել, բայց լոյս ունի, որ կդանուին մարդիկ՝ որոնք կուղղեն իւր թուլ աշխատութիւնը։ Հէնց հետեւեալ օրը Պատկալ՝ սկսեց իւր աշխատութիւնը և, ըստ սովորութեան, շուտով լավշտակուց նրանով՝ Ծրագիր կազմելու փոխարէն՝ նա նամակ գրեց։ Առաջին նամակը շուտով աւարտելով՝ նա կարդաց իւր բարեկամների մօտ. դեռ նամակի կիսին չէր հասել, որ Արնօ բացագանչեց. «Հիանալի է... ամենքը կհաւանեն, պէտք է տպագրել»։ Ահա այսպիսի ծագում ունեցան Պատկալի «Նամակներ գաւառապետին»\*) հռչակաւոր աշխատութիւնը։ Հետզհատէ աւելի գրաւուելով՝ Պատկալը քրքրեց գրադարանները, հանեց սպանիացի, Փրանսիացի և գերմանացի եղուիտների գրուածքները և սարսափելի կերպով դատապարտեց նրանց։ 1657 թուի մարտին հրատարակուեց նրա վերջին

\*) Եզութիւնների դաւառական կառավարչին։

Նամակը: Կարելի՞ է միթէ ենթադրել, որ այս նամակները ցնորուածի գործ են:

Այս գրուածքը, «Լուի ղը Մօւտալ'տի նախկները իւր բարեկամ դաւառապետին եւ արժանապատիւ ևդուիտ հայրերին», եզրւիտական դաւանանքի և բարուականութեան այս հռչակաւոր պարաւագիրները՝ միշտ եղել են և կմնան աստուածաբանական բանակռուի ամենաառաջեղ և կտրուկ գրուածք՝ որը երբեիցէ ուղղուել է Լուլակի աշակերտների դէմ:

Այս նամակների թողած տպաւորութիւնն ահագին էր: Մրանք տպագրուում էին մի ջրաղացի մէջ պահուած գաղանի տպարանում Եղուիտների և նրանց ողաշտպանների զայրութն աներեւակալելի էր: Ամեն տեղ սկսուեցին խուզարկութիւններ և ձերբակալութիւններ՝ տպարանատիրոջը գտնելու համար: Թագաւորի հրամանով խիստ միջոցներ էին ձեռք առնուած: Քննիչը խուզարկեց Պիէր Լեպետիի տունը, (այս հռչակաւոր գրավաճառը և թագաւորական տպարանատէրը յանձն էր առել նամակների տպագրութիւնը), բայց ոչ մի աջողութիւն չունեցաւ, որովհետեւ երբ թագաւորի գործակալները երեացին Լեպետիի տանը՝ սրա կինը վազեց տպարան, տպարանական ծանր շարուածքները վերցրեց թագցրեց իր գոգնոցի տակ և տարաւ հարեանի մօտ, ուր հէնց նոքն ալդ գիշերը տպագրեցին երկրորդ նամակի 300 օրինակը, իսկ իւտու ալ ևս 1200 օրինակ: Թէե տպագրութիւնը

թանկ նստեց, բայց այնքան օրինակ ծախուեց՝  
որ ծախսերը ծածկելուց լեռով բաւականին օգուտ  
ևս մնաց: Ոչ միայն ոստիկանութիւնը, այլ և հա-  
սարակութիւնը խիստ փափագում էր իմանալ, թէ  
ով էր այդ նամակների հեղինակը: Այդ ժամանակ  
Պատկալը ապրում էր Լիւկսենբուրգի մօտ մի բնա-  
կարանում, որը գտնուում էր Սէն-Միշէլի դէմու-  
դէմը: Այս կացարանը նորան առաջարկել էր բա-  
նաստեղծ Պատրիկսը, որ ծառայում էր Օրլէա-  
նեան դոքսի մօտ. բայց աւելի ապահով լինելու  
համար՝ Պատկալը տեղափոխուեց «Դաւիթ թա-  
գաւոր» անունով փոքրիկ հիւրանոցը, որը գտնու-  
ուում էր Սօրբօնի լեռներ, հէնց եղուխտների եղբայ-  
րանոցի դէմուդէմը. «Նա փորձառու գեներալի  
նման դէմ առ դէմ կանգնել էր իւր թշնամու ա-  
ռաջ», ասում է Սէնտ-Բէօվը: Միենուն հիւրանոցի  
մէջ տեղաւորուեց և նրա մեծ քրոջ ամուսինը,  
Պէրիէ, որ անձնական գործերով Պարիզ էր եկել:  
Ֆրէտա անունով մի եղուխտ, որ Պէրիէի ազգա-  
կանն էր, այս վերջինի մօտ հիւր գալով՝ մտեր-  
մարար նախազգուշացրեց նրան, որ իբր թէ լուր է  
տարածուել, թէ «նամակների» հեղինակը Պատկալն  
է: Պէրիէ զարմացած ձեացաւ և ասաց, որ այդ  
լուրը հնարովի է, այնինչ այդ վայրկեանին նրա  
մահճակալը ծածկող կիսարաց վարագուրի լեռեր  
դրուած էր Պատկալի նամակներից քսան օրինակ,  
որոնք հէնց նոր էին տպագրուած: Եղուխտի դնա-

լուց լեսոյ՝ Պէրիէ Պասկալի մօտ վագեց և գործի էութիւնը պատմելով՝ խորհուրդ տուեց աւելի զգուշ կենալ։ Խնչ և իցէ Պասկալ՝ կարողացաւ խոյս տալ Բասարիալի բանահերից։

Բայց շատ դժուար էր խոյս տալ «նամակների» գէմ ուղղուած հարուածներից։ 1660 թուին թագաւորի հրամանով կարծեցեալ Մօնտալ'տի նամակները կրկին քննուեցին Սօրբօնի չորս եպիսկոպոսներից և ինը գօլտօրներից կազմուած յանձնաժողովի մէջ։ Յանձնաժողովը հաստատեց, որ նամակների մէջ պարունակոււմ են Յանսէնի բոլոր մոլորութիւնները, որ դրանց մէջ շատ վիրաւորական խօսքեր կան պապի, եպիսկոպոսների և թագաւորի գէմ, Պարիզի աստուածաբանական ֆակուլտէաի և մը քանի հոգեոր մշաբանութիւնների գէմ։ Այս ամենը լայտնուեց պետական խորհրդին, որը հրամայեց պատառուածել այդ նամակները և այրել դահճի ձեռքսով։ Մի քանի գաւառական խորհուրդներ եռ մրենոյն կերպ վարուեցին, բայց սրանք այնքան էլ անկեղծ չէին։ Այսպէս, օրինակ, Ե (Aix) գաւառի խորհուրդը վճռեց «նամակներն» այրել, բայց խորհրդի անդամներն անձամբ մեծ հետաքրքրութեամբ կարդում էին «նամակները»։ Նրանցից ոչ ոք չկամեցաւ զոհել իւր մօտ գըտնուած օրինակը՝ հրապարակով այրելու համար։ Վերջապէս զատաւորներից մէկը դիտմամբ յանձնեց իւր օրացուցը, որի վրայ դրել տուեց նա-

մակներից վերնագիրը։ Այս օրացուցն էր, որ հրապարակով այրուեց։

Պատկալի համակներից մասին որոշ գաղափար կազմելու համար առաջ ենք բերում հետեւեալ դէպքը։ Հէնց որ առաջին նամակները հրատարակուեցին՝ Բուանի քարոզիչներից մէկն անմիջապէս յալտարարեց, որ նամակների հեղինակը մի վտանգաւոր հերետիկոս է, որ դրպարտում է արժանապատիւ եզուիտ հալրերին։ Միենոցն ժամանակ Բուանի հոգևորականութիւնը իւր միջից մի մասնաժողով ընտրեց այն նպատակով, որ «նամակներից մէջ բերուած քաղուածները ստուգուին ու համեմատուին բնագիրների հետ, Քաղուածները բոլորովին համապատասխանում էին այն ընագիրներին, որոնցից քաղել էր Պատկալը։ Այս բանի մէջ կատարելապէս համոզուելով՝ Բուանի քահանաները մի յալտարագիր ուղարկեցին Պարիզի քահանաներին, որով այս վերջիններին առաջարկում էին հրապարակով դատապարտել եզուխանների քարոզած կեղտուառութիւնները։ Յիրաւի, 1656 թուին Պարիզում ժողով գումարուեց, որի մէջ ընդունուեց Բուանի քահանաների առաջարկը։

Ահա թէ ինչ լեզուով էին խօսում Բուանի քահանաները. «Եզուխտական գրքերի ընթերցումը լազողներին սարսափ ազդեց։ Մենք ստիպուած էինք ականջներս փակել, ինչպէս որ արել են Նիկիոս ժողովի սուրբ հալրերը, որոնք չէին ցանկանում

լսել Արիոսի սրբապղծութիւնները։ Մեղանից իւրաքանչիւրը սաստիկ ցանկանում էր պատժել ալդ խզճալի թուղթ մրտողներին, որոնք խեղաթիւրում են աւետարաննական ձշմարտութիւնները և քարոզում այնպիսի գաղափարներ, որոնցից կամաչէին ազնիւ կուապաշտները և բարի թուրքերը։ Այսպիսով Պատկալի գործը գեռ հասպարակով ալրուելուց առաջ՝ գրաւեց հասարակութեան համակրութիւններ ու հաւանութիւնը։



## ԳԼՈՒԽ Ը.

Մուշը տատառկիւն հրաշքը: — Պասկալի ՝Մաքերը: — Պասկալի կեանքի վերջին տարբները: — Օքիուդ Ռօանէզի վեճակու: — Պասկալի բարեղ ործութիւնը: — Աերջին հիւանդութիւնը և մահը:

Հենց այն մըջոցին, երբ Պասկալը գրում էր իւր «նամակները»՝ մի դէպք տեղի ունեցաւ, որ շատ համապատասխանում էր նրա ոգեսրուած տրամադրութեանը և որը նա ընդունեց իբրև ասուածալին ողորմածութեան անմիջական արտաքալութիւն իւր նկատմամբ: Նրա քրոջ աղջիկը, Մարգարիտ Պերիէն, աչքացաւ ունէր Պարիսի բըժիշկները այդ հիւանդութիւնը անբուժելի էին համարում. մնում էր մւայն «հրաշքի» դիմել: Պորտ-Բոլեալում մի մեխ էր գտնւում, որ առուրբ տատարկը էր կոչւում. հաւատացնում էին, թէ այդ մեխը վերցրած է Քրիստոսի տատառկաւոր պոակից: Տիկին Պերիէն ասում է, որ իւր աղջիկը «մի ակնթարթում» բժշկուեց ո. տատառկին առաջին իսկ հպումից: Բայց միւս քոյրը, կոյս Ժակելինը

իւր մի նամակի մէջ գրում է, որ աղջկան բերում  
էին մենաստանը և վեց օր շարունակ նրա աչքը  
կպցնում ո. տատասկին։ Աղջիկը առողջացաւ, և  
Պատկալը հաւատաց այդ անկատկածելի հրաշքին և  
ալդ իբրև աստուածալին շնորհ էր համարում իւր  
նկատմամբ։

Այս դէպքի տպաւորութեան տակ՝ Պատկալը,  
որ մինչև այդ ժամանակ իւր աստուածաբանական  
գործունէութիւնը սահմանափակել էր եղուիտների  
դէմ բանակռիւով՝ մտքումը գրեց գրել քրիստո-  
նէութեան մի տեսակ ընդարձակ ջատագովութիւն։  
Այս ջատագովութեան հատուածները կազմեցին այն  
ժողովածուն, որ լազոնի է Պատկալի «Մտքեր»  
անունով։

Պատկալը արդէն վաղուց հրաժարուած լինե-  
լով աշխարհալին զուարձութիւններից՝ հետզհետէ  
աւելի և աւելի էր անձնատուր լինում ձգնաւո-  
րական կեանքին։ Նա այն աստիճանի հասաւ, որ  
մարդուս ամենաբնական զգացմունքներն անգամ  
սկսեց լանցանք համարել. ալսպէս օրինակ, Պատ-  
կալը իւր քրոջը մեղադրում էր այն բանի համար,  
որ նա, իւր կարծիքով, շատ էր փափալում իւր  
զպւակներին, հաւատացնելով՝ որ իբր թէ մալրա-  
կան փափալանքները երեխալին թուլամորթ են  
զարձնում։ Պատկալը իւր սեփական նիստ ու կա-  
ցից հեռացրեց ամեն տեսակ շռալութիւն և լար-  
մարութիւն։ մարմնական տկարութիւններով չբա-

ւականանալով՝ դիտակցաբար նորանոր Փիզիքա-  
կան տանջանքներ էր պատճառում իրան։ Յաճախ  
նա իւր մերկ մարմնի վրայից կապում էր երկաթէ  
գօտի, որի վրայ ցցուած էին սրածալը երկաթէ  
փշեր, և հէնց որ նրա գլխում «զուարձութեան»  
վերաբերեալ որևէ միտք էր ծագում իսկոյն բռունց-  
քով այնպէս խփում էր գօտուն, որ երկաթէ փշերը  
մտնում էին մարմնի մէջ։ Այս սովորութիւնը Պա-  
կալին այն աստիճան օգտակար թուաց, որ մինչեւ  
մահը նրանից չբաժանուեց։ Նա գօտուց չկամեցաւ  
բաժանուել իւր կեանքի վերջին տարիներն ան-  
դամ, երբ այն աստիճան տանջւում էր, որ չէր  
կարողանում ոչ գրել, ոչ կարդալ։ Երբեմն նա ստի-  
պուած էր լինում ոչինչ չանել, զբօննել անգամ  
չէր կարողանում, և այդ ժամանակ նա միշտ վա-  
խենում էր, թէ մի գուցէ անգործութիւնը հանէ  
նրան ծշմարտութեան ճանապարհից։

Իւր նիստ ու կացի մէջ Պատկալը այն աս-  
տիճան պարզութիւն մացրեց, որ նրա սենեակում  
ոչ մի գորդ, ոչ մի աւելորդ իր չկար։ Զափազանց  
խստակեաց կեռնքն այն աստիճանին հասցրեց Պա-  
կալին, որ նրա երիտասարդութեան ժամանակուայ  
չեւանդութիւնները դարձեալ նորոգուեցին։

Պատկալի կեանքի վերջին տարիները ներ-  
կալացնում են մի շարք Փիզիքական տանջանք-  
ներ։ Նա հերսաբար աանում էր այդ տանջանք-

ները, աւելացնելով նրանց վրայ ուրիշ անտեղի  
տանջանքներ ես:

Պատկալը ձգտում էր իւր համար անկարելի  
և անմատչելի դարձնել մինչեւ անդամ ամենատար-  
րական բաւականութիւններ, օրինակ՝ ճաշակելու  
զգացողութիւնը: Մշտական հիւսնղութիւնները  
նրան ստիպում էին լաւ և զիւրամարս կերակուր-  
ներ ուտել, բայց նորան ամենահառարակ կերակուրն  
անգամ շռայլութիւն էր երեւում, և Պատկալը աշ-  
խատում էր կուլ տալ կերակուրն այնպիսի արա-  
գութեամբ, որ չկարողանայ իմանալ նրա համը-  
նրա երկու քորերը, Ժիլբերտը, մինչեւ անգամ  
կոյս Ժակելինը, Եւֆիմիան—երբեմն աշխատում  
էին նրա համար համով կերակուրներ պատրաս-  
տել: Բայց երբ Պատկալին հարցնում էին, թէ  
արդեօք նա կերակուրներին հաւանել է՝ պատաս-  
խանում էր. «Ինչու առաջուց չէիք նախազգու-  
շացնում. ես համի վրայ ուշաղրութիւն չգարձրիս:  
Եթէ մէկը նրա ներկայութեամբ որեև կերակուր  
գովում էր՝ Պատկալը չէր կարողանում համբերել  
և դէպի ուտելիքն ունեցած ալդպիսի վերաբեր-  
մունքը «հեշտասիրութիւն» էր անուանում: Թէ  
նրա սեղանն առանց այն էլ լուլորտին պարզ էր՝  
այնու ամենալնիւ Պատկալը շատ լնափր էր համա-  
րում իւր կերածը և ասում էր. «Ուտել միայն ճառ-  
չակին բաւականութիւն տալու համար՝ անարգ եր  
աններելի բան է»: Պատկալը մանկութեան հասա-

կում շատ էր սիրում համեղ և գրգռիչ կերակուր-ներ. իսկ այժմ թուլ չէր տալիս, որ իւր համար սօսւս կամ բազու պատրաստեն, ոչ մի կերպ նրան չէր կարելի համազել, որ նարինջ ուտէ: Բացի դրանից՝ նա միշտ որոշ քանակութեամբ էր ուտում. այս քանակութիւնը նա ինքն էր իւր համար նշանակել, հաւատացնելով որ հէնց ալդքանն է անհրաժեշտ իւր ստամոքսին: Որքան էլ ախորժակը լաւ լինէր՝ Պատկալը դարձեալ որոշ չափից աւելի չէր ուտի, և ընդհակառակը, ախորժակը քոլորովին կորցրած ժամանակ նա զօռով ուտում էր այնքան՝ մինչև որ վերջացնում էր որոշուած քաժինը: Երբ նրան հարցնում էին, թէ ինչու է իրան ալդպէս տանջում՝ Պատկալը պատասխանում էր. «Ոէտք է բաւականութիւն տալ ոչ թէ լեզուի քմահաճութիւններին, այլ ստամոքսի պահանջներին»: Պատկալը նմանապէս մեծ բաւականութեամբ էր խմում մի տեսակ զղուելի դեղեր, որոնք ալդժամանակները շատ գործածական էին: Նա միշտ առանց հակառակութեան կատարում էր բժիշկների պատուէրները և զղուանքի նշոյլ անգամ չէր արտախայում: Երբ նրա շրջապատղները զարմանում էին՝ նա ծիծաղելով առում էր. «Չեմ հասկանում, թէ ինչպէս կարելի է զղուանք արտախայտել դեղ ընդունելու ժամանակ, քանի որ ալդ քո կամքովն է կատարւում և առաջուց քեզ լայտնի է

Նրա անախորժ համը: Զգուանքն առաջանում է միայն ստիպմունքից և անսպասելի դէպքերում»:

Իւր կեանքի վերջին տարիները Պասկալը առանձին ուշազրութիւն էր դարձնում բարեգործութեան վրայ:

Աղքատներին օգնելու մասին արած մտածմունքները Պասկալի մէջ մի շատ գործնական միտք զարթեցրին: Պասկալին է պատկանում երթենկութեան ամենաարժան եղանակի կազմակերպութեան միտքը: Նա առաջինն էր, որ Ֆրանսիայում և համարեա ամբողջ Եւրոպայում մտածեց կազմակերպել «հինգ կողէկանոց կառքեր» կամ օմնիբուսներ (հանրակառքեր): Սրանով Պասկալը ցանկանում էր թէ չքաւոր մարդկանց երթենկութիւնը հեշտացնել, և թէ ժողովել մի գումար՝ կարօտեալներին օգնութիւն ցողց տալու համար: Այս ձեռնարկութեան լաջողութեան մասին շատերն էին կասկածում, բայց Պասկալը բոլորովին վստահ էր. նրա մաթեմատիկական խելքը շուտով ըմբռնեց գործի Փինանսական կողմը:

Այս ձեռնարկութեան մտադիրութիւնը Պասկալի մէջ զարթեցրեց հետևեալ դէպքը.

1662 թուին Իլու քաղաքում սարսափելի սովէ էր: Պարիզում տպագրուեցին բուռն հրաւէրներ բարեգործներին ուղղուած: Այս հրաւէրների մէջ նկարագրուած էին աճնպիսի սարսափներ, որոնցից մարդու մազերը փշագրում էին: Պաս-

կալն ինքը մեծ կարողութեան տէր չլինելով՝ չէր  
կարող սովեալներին դգալի օգնութիւն հասցնել.  
ուստի և մտածեց գլուխ բերել լիշեալ ձեռնարկու-  
թիւնը և կազմեց նրա ծրագիրը: 1662 թուի լուն-  
ուարի վերջին Պատկալի ղեկավար սթեամբ կազ-  
մակերպուեց կապալառուների մի ընկերութիւն,  
որ պէտք է Պարիզի գլխաւոր փողոցներով կառ-  
քերի կամ օմնիբուսների երթեւեկութիւն հաստա-  
տէր: Այս գործի առթիւ եղած բանակցութիւնների  
ժամանակ Պատկալը պահանջեց, որ կապալառու-  
ները 300 ր. կանխավճար տան՝ կարօտեալներին  
չուտափուիթ օգնութիւն հասցնելու նպատակով:  
Պատկալի ազգականները նրա այս մտադրութիւնն  
իմանալով՝ սկսեցին նկատողութիւններ անել, թէ  
գործը գեռ նոր է սկսուել, կարող են վեասուել,  
գոնէ պէտք է մի տարի սպասել և ալլն: Այս մա-  
սին Պատկալը պատասխանեց. Եթէ վեաս լինի՝ ես  
մէջ կբերեմ իմ ամբողջ կարողութիւնը բայց  
մինչեւ գալ տարի սպասել անկարելի է, որովհետեւ  
կարիքը չէ սպասում: Սակայն կապալառուները  
չհամաձայնեցին առաջուց փող տալ, և Պատկալը  
ստիպուած էր՝ իւր մօտ գտնուած փոքրիկ զումարն  
ուղարկելով բաւականանալ:

Պատկալը լաճախ իւր մեծ քրոջը համոզում էր  
նուիրուել աղքատներին օգնելու գործին, մինոյն  
հոգով էլ կրթել իւր զաւակները: Քոյքը հակառա-

կում էր և ասում, որ ամեն մարդ նախ և առաջ  
պէտք է իւր ընտանիքի մասին հոգ տանիւ: Դու  
ուղղակի բարի կամք չունիս, ասում էր Պասկալ':  
Դու կարող ես այնպէս անել, որ աղքատներին օգնե-  
լով՝ քո ընտանիքն ես չվասուի: Երբ Պասկալին  
ասում էին, որ մասնաւոր բարեգործութիւնը ոչինչ  
բան է, ի նկատի ունենալով աղքատների ահագին  
բազմութիւնը, և մի կաթիլ ջուր է ընդարձակ ծո-  
վի մէջ՝ նա սորան եռանդով հակառակում էր.  
«Մենք կոչուած ենք, ասում էր Պասկալ', ոչ թէ  
ընդհանուր, այլ մասնաւոր բարեգործութեան հա-  
մար: Զքաւորութիւնը թեթեացնելու ամենահեշտ  
միջոցն այն է, որ աղքատներին օգնութեան հաս-  
ցնենք աղքատօրէն, ակսինքն իւրաքանչիւրս  
իւր ոլժը կարողացածին չափ, փոխանակ ընդարձակ  
ծրագիրների լետեկից ընկնելու»: Պասկալ'ն ասում  
էր, որ ինքը պետական և հասարակական բարե-  
գործութեան հակառակ չէ. նրա ասելով՝ «մեծ  
ձեռնարկութիւնները պէտք է լանձնել մի քանի  
առանձին անհատների, որոնք կոչուած են ալդ-  
պիսի գործերի համար. բայց չքաւորների ամենո-  
րեալ և մշտական օգնութիւնը իւրաքանչիւր մէկի  
գործն ու պարտականութիւնը պիտի դառնար»:

Պասկալի բարւական մաքրութիւնը շատ դէպ-  
քերում ծայրակեղութեան էր հասնում: Նրա քրոջ  
ասելով՝ «Ուղղակի չէ կարելի հաւատալ, թէ այս  
դէպքում նա որքան մանրակրկիտ էր: Ես շարու-

Նաև վախսենում էի նրա մօտ որեւէ զուարձալի բան  
խօսել. նա պախարակելի բան էր զանում մինչեւ  
անգամ այնպիսի խօսակցութեան մէջ՝ որը ևս բո-  
լորպին անմեղ էի համարում: Օրինակ, եթէ ա-  
ռում էի «մի գեղեցիկ կին եմ տեսել», նա բարկա-  
նում էր ասելով, որ երբէք չէ կարելի ալսպիսի  
բաներ խօսել սպասաւորների և երիտասարդների  
առաջ, որովհետեւ չէ կարելի իմանալ, թէ նրանց  
մէջ ինչ տեսակ մտածմունքներ կարող են զարթնել:

Պատկալի մահուանից երեք ամիս առաջ պա-  
տահեց մի դէպք, որը ցուց էր տալիս, թէ այդ  
ճգնաւորական հոգու խորքերում թագնուած էին  
մարդկալին զգացմունքներ և բուռն կրքեր, որոնց  
նա ամեն կերպ խեղպում էր:

Մի անգամ Պատկալը եկեղեցուց առն վերա-  
դառնալիս՝ լանկարծ նորան մօտեցաւ մի մօտ 15  
տարեկան խիստ գեղանի աղջիկ և նրանից ողոր-  
մութիւն խնդրեց: Պատկալը նայեց նրա վրայ, և  
գութը այնպէս շարժուեց, որպէս ոչ մէկ անգամ  
իւր օրումը չէր զգացել: Նա հասկացաւ, որ այդ  
աղքատ գեղեցկունուն վտանգ է սպառնում մեծ  
քաղաքում, որը գալթակղութեան և անառակու-  
թեան բոլն էր դարձել:

— Ո՞վ ես դու, և ինչն է քեզ ստիպում ո-  
զորմութիւն խնդրել:

Աղջիկն ասաց, որ ինքը գիւղիցն է եկել, որ

իւր հալրը մեռել է, իսկ մալրը հիւանդ պառկած է Օտել-Դիէս հիւանդանոցում:

Պասկալը սրտաշարժուած ոչ միայն կրօնական ջերմեռանդութիւնից, այլև կարեկցութեան զուտ երկրացին զգացմունքից դէպի ալդ գեղանի, ջահէլ արարածը՝ տարաւ նրան՝ իրան անձամբ անձանօթ մի քահանալի մօտ, որը յախնի էր իւր անարատ վարք ու բարքով։ Պասկալը քահանալին փող տուաւ և ինդրեց հոդ տանել ալդ աղջկալ վրայ և ուշի ուշով պահպանել նրան ամեն տեսակ չարիքներից։

Հէնց միւս օրը նա քահանալի մօտ մի կին ուղարկեց, որին աղջկալ համար հագուստի և ուրիշ անհրաժեշտ պիտուքների փող էր տուել։ Քահանան աշխատեց բարերարի անունն իմանալ, բայց ասացին, որ ալդ անունը պէտք է անդալա մնայ։ Պասկալի մահուանից յետու միայն նրա քոլրը յախնեց այս գաղտնիքը։

Պասկալին մեղադրում էին, որ նա չափազանց չոր ու ցամաք է, ճոռոմաբան և մինչև անդամ անսիրտ։ Այսպէս ասողները մատնացոյց էին անում այն հանգամանքի վրայ, որ նա իւր կրտսեր քրոջ, Ժակելինի մահուան ժամանակ, այնքան էլ աըխրութիւն չարտալաւեց, չսրտաշարժուեց, մանաւանդ որ նա սիրում էր Ժակելինին։ Ժակելինը Պասկալից տասն ամիս առաջ մեռաւ. և ավ դիտէ, արդեօք այս կորուստն աւելի չփութացրեց եղբօր

վախճանը։ Ժակելինի մահն առաջ եկաւ ջղալին ցնցումից, որը պատահեց այն ժամանակ, երբ նրան ստիպեցին ստորագրել հաւատի մի այնպիսի խոստովանութիւն, որը հակառակ էր նրա խղճին։ Այս պատահեց այն մըջոցին, երբ եղուիաների և կառավարութեան զեկավարութեամբ հաշածում էին եանսէնականներին, երբ եանսէնականութեան մէջ կասկածուող վանական կոլուերին թագաւորի առանձին հրամանով զուրա էին անում վանքերից։ Երբ Պատկալին յատնեցին իւր կրտսեր քրոջ մահուան լուրը՝ նա միայն ասաց, «Աստուած տակ, որ մենք էլ այդպէս լաւ մեռնենք»։ Այս մահուան առթիւ մեծ քոլը խիստ վշտացաւ և սուզ էր անում, իսկ Պատկալը բարկանում էր նրա վրայ և ասում, որ պէտք է գովել Աստծուն նրա համար, որ նա այդպէս վարձատրել է իրանց, այնինչ իրանք միայն փոքր ինչ ծառալութիւն են մատուցել Աստծուն։ Բայց սրանից գեռ չէ կարելի եղբակացնել, որ Պատկալը մեծ ոլժ էր գործ դնում ճնշելու, կամ գոնէ փոխելու իւր մարդկալին մտերմական յարաբերութիւնները։ Նա այս յարաբերութիւններին տուեց մի այնպիսի ուղղութիւն, որը, ըստ իւր կարծեաց, համաձայն էր քրիստոնէական բարուականութեան։ Փաստեր կան, որոնք ցոյց են տալիս, թէ Պատկալին որքան թանկ էր նատում այս ներքին կոփեր և որքան սիսալուած էին նրա մասին մինչև անգամ նրա մտերիմները։ Ահա թէ ինչ է

դրում նրա մեծ քոյրը, խօսելով զեռ այն ժամանակուաէ մասին, երբ դեռ կենդանի էր կրտոեր քոյրը, որն ամենից լաւ էր ճանաչում եղբօրը և կարողանում էր նրան հասկանալ, որավհետեւ ինքն նո քնաւորութեամբ խխառ նմանում էր Պատկալին:

«Նա ոչ միայն ինքն անձամբ չէր կամենում ուրիշների հետ մտերմանալ, այլև թուլ չէր տալիս, որ ուրիշներն ես խր հետ մտերմանան: Այս բանը չիմանալով՝ ես երենին զարմանում էի և քրոջո ասում, որ եղբայրս ինձ չէ սիրում և որ, ըստ Քրեոլիթին, ես զգոհութիւն եմ պատճառում նորան այնչե անդամ այն զէպքում, երբ ամենայն սիրով և փայփայանքով խնամում եմ նրան և հոգ տանում հիւանդութեան ժամանակ: Քոյրա ասում էր, որ ես սիսալում եմ, որ, ընդհակառակը, նա զիտէ, որ եղբայրս ինձ այնքան շատ է սիրում, որքան ուր միայն կարող եմ ցանկալ: Շուտով ես ես զրանում համոզուեցալ. որովհետեւ երբոր ինձ պէտք էր գալիս եղբօրա օգնութիւնը՝ նա անմիջապէս հասցնում էր այդ օգնութիւնն այնպիսի հոգատարութեամբ և սիրով, որ չէր կարելի կասկածել նը քառ զէպի ինձ ունեցած բուռն զգացմունքների մասինց:

Այսուամենայնիւ Պատկալի անտարբերութիւնն անհասկանալի էր թւում քրոջը: Միայն եղբօր ժամուանից իսոով նա խմացաւ զաղոնիքը՝ երբ մզարքաց Պատկալի հետեւեալ գրուածը. «Ոչ ոք ինձ

չպիտի սիրէ, թէկուզ ալդ լինի մի բոլորովին կա-  
մաւոր և հաճելի ձգտումն։ Ես կխաբեմ բոլոր այն  
մարդկանց սպասելիքները, որոնք այս տեսակ ցան-  
կութիւններ կունենան, որովհետեւ ես անձնաւո-  
րութեան ծալքն եմ, և ոչ ոքի չեմ կարող դոհա-  
ցնել։ Միթէ ես սպատրաստ չեմ մեռնելու։ Կնշանա-  
կէ նրանց սիրով առարկան պիտի մեռնի։ Անապ-  
նւութիւն կլինէր իմ կողմից սպափել որեէ մէկին  
առութեան հաւատալ, եթէ մինչեւ անդամ մէկին  
դորովալից կերպով համոզէի ալդ սառութեան մէջ  
և եթէ մեծ բաւականութեամբ ինձ հաւատալին և  
եթէ ես ինքս էլ ալդ դէպքում հաճուք զգացի։ Ուս-  
տի և անազնուութիւն կլինէր՝ եթէ աշխատէի որեէ  
մէկի օերը զբաւել։ Եթէ ես աշխատեմ մարդկանց  
ինձ հետ մտերմացնելու՝ պէտք է նախ զգուշացնեմ  
ալդ խաբէութեան հաւատացողներին, որ նրանք  
երբէք ինձ չհաւատան։ Ինձ հետ մտերմութիւն  
հաստատելու փոխարէն՝ թող աշխատեն հաճուանալ  
Աստուծունու։

Ահա այս մտքերի մէջ պէտք է փնտուել Պաս-  
կալի կեանքի վերջին տարիներում նրա և օրիորդ  
Բօանէզի մէջ եղած լարաբերութիւնների հոգեբա-  
նական սպատճառները։ Ալդ միջոցին օրիորդ Բօա-  
նէզ աշխարհից հրաժարուելով՝ Պօլտ-Բօյեալի կու-  
սանաց վանքն էր մտել։ Պասկալը իսկապէս օրհա-  
սական աղղեցութիւն ունեցաւ այս դժբախս  
օրիորդի ապագայի վրայ։ Քանի որ Պասկալը դեռ

կենդանի էր՝ դուքս Ռօանէզի քոյրը լիովին ենթարկում էր նրա աղղեցութեանը։ Գժբախտաբար օրիորդի Պատկալին գրած նամակները կորել են։ Աակայն հաւանական է, որ օրիորդի նամակներն են գրուած էին նոյն բարեպաշտական ոգով, որը տիրապետում է Պատկալի օրիորդին ուղղած նամակների մէջ։ Բայց Պատկալի դէպի այդ աղնուական օրիորդն ունեցած խակական զգացմոնքները պէտք է փնտուել նրա «Մտքեր» անուանիալ գըրուածքում։ Մտքերի մէջ մի տեղ Պատկալը առում է. «Միանակ մարդն ինքն ըստ ինքեան ներկայացնում է անկատարելութիւն։ որպէսզի նա լիովին բախտաւոր լինի՞ պէտք է մի ուրիշն ես գտնէ։ Նա չաճախ որոնում է այնպիսին, որը համապատաս խանէ իւր դրութեան։ բայց երբեմն էլ այնպէս է պատահում, որ իրանից աւելի բարձրին է նայում և զգում է, որ բոցը բանկում է։ բայց չէ համարձակում այս իրողաւթիւնն իմացնել նորան։ որը բորբոքել է այդ բոցը։ Երբ սիրում ես քո դիրքից աւելի բարձր կանգնած կնոջ՝ սկզբում սիրուդ կըցւում է նաև փառասիրութիւնը։ բայց շուտով սէրը գերակշռում է։ Սէրը բանակալ է, ոչ մի ընկեր չէ ընդունում։ նա ուզում է մենակ մնալ. բոլոր կըրքերը պէտք է նորան հնազանդինու։

Օրիորդ Ռօանէզ Պատկալի աղղեցութեամբ  
1857 թուին մօրից ծածուկ փախչէլով՝ մտաւ Պօրտ-  
Պօլեալ՝ իբրև նորընծալ։ Նա կուտութեան երդում

տուեց, բայց չկարողացաւ ձեռնադրուել, որովհետեւ  
նրա ազգականները ձեռք էին բերել թագաւորի  
դիւանատան հրամանը (lettre de cachet), որով  
օրիորդին ստիպում էին դառնալ իւր ընտանիքի  
գիրկը։ Օրիորդը Պօրտ-Ռօյեալում մնաց մինչև Պատ-  
կալի մահը։ Այստեղից նա նամակագրութիւն ու-  
նէր Պատկալի հետ, նրա քոլրերի և աբբահազը  
Մէնդլինի հետ, որը Պատկալի հոգեսր առաջնորդն  
էր։ 1667 թուին, Պատկալի մահուանից յետով, ան-  
բախտ օրիորդը վճռեց իւտ առնել իւր կուսութեան  
խոստումը և պսակուել դուքս դը Ֆէիլեադի հետ։  
Նանսէնականները նրան նզովեցին։ այս ամուսնու-  
թիւնը նրանք համարում էին անկումն, և այս ազ-  
նիւ կինը, որը գորտվալից մակը և օրինակելի տան-  
տիկին էր՝ Փանատիկոսութեան զոհ դարձաւ։ Հա-  
րունակ խղճահարութիւնները նրան տանջում էին,  
և նա մի անգամ ասաց, որ աւելի լաւ կհամարէր  
Պօրտ-Ռօյեալի հիւանդանոցում կաթուածահար հի-  
ւանդ լինել՝ քան թէ ապրել ընտանեկան քաղցր  
կեանքով։ Նրա զաւակներից մի քանիսը մանուկ  
հառակում մեռան, խակ միւսները թզուկանման կամ  
հաշմանդամ արարածներ էին։ Նրա միակ որդին, որը  
միայն ապրեց մինչև խորին ծերութիւն՝ անզաւակ  
մեռաւ։ իսկ արկինը մեռաւ կրծքի քաղցկեղից  
(բաբ)։ Համարձակ կարելի է ասել, որ նրա դըժ-  
բախտութեան միակ պատճառը Պատկալի սէրն էր։  
Պատկալը իւր կեանքի վերջին տարիներն

ամենքին զարմացնում էր իւր համբերատարութեամբ։ Տօլսառից դեռ շատ առաջ նա դատապարտեց չարին բռնութեամբ հակառակելու ամենատեսակ փորձ։ Իւր ժամանակակից քաղաքագիտութեան չարիքը շատ լաւ հասկանալով հանդերձ՝ նաև այնուամենախնիւ խիստ դատապարտում էր փրոնդը. նա ասում էր, որ ազգամիջեան պատերազմը մերծաւորների դէմ գործած մեղքերից ամենամեծն է։ Ինքն իւր մասին Պասկալը հետեւեալն է ասում։ «Ես սիրում եմ աղքատութիւն, որովհետեւ Քրիստոս ես այդ էր սիրում։ Ես սիրում եմ հարստութիւն, որովհետեւ դա միջոց է տալիս անբախտներին օգնելու։ Ես հաւատարիմ եմ ամենքին։ Ես չարի համար չար չեմ հատուցանում, բայց ամենքին ես ցանկանում եմ իմ զրութիւնն ունենալ, որով մարդկանցից ոչ բարիք ես սպասում, ոչ չարիք։ Ես ցանկանում եմ լինել ծշմարտասէր, անկեղծ ես գութ և սէր եմ տածում դէպի նրանց, որոնց Աստուած աւելի սերտ կերպով է միացրել ինձ հետո։»

Պասկալը բնաւորութեամբ աշխուժ լինելով լաճախ բարկանում և անհամբերութիւն էր արտաքայտում. բայց հէնց որ նկատում էր իւր բարեկութիւնը՝ իսկոյն մեղմանում և հանդարտում էր։ «Նա մանուկ է. նա համեստ է որպէս մանուկը — այսպէս է խօսում Բէրրիէ քահանան Պասկալի մասին։ Մահուանից երկու ամիս առաջ Պասկալը ա-

խորժակը բոլորովին կորցնելով՝ սկսեց տանջուել։ Այդ միջոցին Պատկալի տանը տեղաւորաւեց մի չքաւոր մարդ իւր կնոջ և երեխաների հետ։ Պատկալը նորան տուեց մի սենեակ և վառելիք, բայց ոչ մարդուց և ոչ կնոջից ոչ մի ծառակութիւն չէր ընդունում։ Նա այդ անում էր միայն խղճահարուելով անբախտ ընտանիքի թշուառութեան վրայ։ Երբ Պատկալի ազգականներն ալդ աեսակ բարեգործութեան համար նրան պախարակում էին։ Պատկալը պատասխանում էր. «Ի՞նչպէս թէ ես զրանց ծառակութիւնից չեմ օգտուամ։ Ինձ համար բոլորս վին հաճելի չէ մենակ մնալ, իսկ այժմ ես մենակ չեմ»։

Այդ միջոցին Պատկալի մօտ տեղաւորուած մարդու որդին ծաղկով հիւանդացաւ։ Մեծ քոյրը լաճախ այցելում էր եղբօրը, որովհետեւ Պատկալը հիւանդ լինելով՝ չէր կարող առանց նրա խնամատարութեան մնալ։ Պատկալը վախեցաւ, թէ քոյրը կարող է վարակել իւր երեխաներին. այսպէս թէ ալնպէս՝ նա ստիպուած պէտք է բաժանուէր այդ ընտանիքից։ Բայց Պատկալը հիւանդ երեխակին չհեռացրեց, և թէև ինքն էլ էր հիւանդ՝ բայց մը տածեց. ՈՅքեխակի հիւանդութիւնն խմիցն աւելի վաճանգաւոր է. ես նրանից մնձ եմ, ուստի և տեղափոխուելուն աւելի կդիմանամ։ Յուլիսի 29-ին Պատկալը հեռացաւ իւր բնակարանից, ուր այլև վիճակուած չէր նորան վերադառնալ։

Նա տեղաւորուեց իւր քրոջ տանը, Սէնտ Էտիէն փողոցի վրայ, և բնակուեց մի սենեակում, որը երկու վանդակապատ պատուհան ունէր:

Երեք օրից լետոյ Պասկալը սարսափելի ծագոցներ զգաց և բոլորովին քնից զրկուեց. բայց զարմանալի կամքի ոլժ ունենալով՝ նա առանց տրտնջալու տանում էր տանջանքները, ինքն անձամբ ընդունում էր դեղերը և թուլ չէր տալիս, որ աւելորդ խնամք տանեն իւր վրայ։ Բժիշկների ասելով՝ հիւանդի զարկերակը կանոնաւոր էր, տեսդ չկար, ուստի և ոչ մի վտանգ չկար։ Սակայն չորրորդ օրը ծակոցներն այնպէս սաստկացան, որ Պասկալը խնդրեց քահանայ հրաւիրել և խոստովանուեց։ Լուրը շուտով տարածուեց նրա բարեկամների շրջանում, և նրանցից շատերը հիւանդին այցելութեան եկան։ Բժիշկները շփոթութեան մէջ ընկան. նրանցից մէկն ասաց, որ այդքան կասկածամտութիւն չէր սպասում Պասկալից։ Այս նկատողութիւնը բարկացրեց Պասկալին. «Յս ուզում եմ հաղորդուել, բայց դուք զարմանում էք, որ ես խոստովանուեցի։ Վախենում եմ աւելի զարմացնել ձեզ, ուստի և լետաձգում եմ»։

Բժիշկները շարունակ պնդում էին, որ հիւանդութիւնը վտանգաւոր չէ։ Արդարեւ ժամանակաւրապէս փոքր ինչ լաւացաւ Պասկալ, սկսեց ման գալ։ Այնուամենայնիւ Պասկալը առողջանալու յուս չունէր, ուստի և մի քանի անգամ խոստու-

վանուեց։ Նա մի կտակ գրեց, որի մէջ իւր կարողութեան մեծ մասը չքաւորներին է կտակում։

Աթէ ամուսինդ Պարխղում լինէր՝ ասաց նա, ևս իմ բոլոր կարողութիւնն աղքատներին կտայի։ Հաւատացած եմ, որ նա կհամաձայնէր»։ Յետոյ մտածելով աւելացրեց. «Այս ինչիցն է, որ ես աղքատների համար ոչինչ չեմ արել, թէն միշտ սիրել եմ նրանցու։

### Քուրը պատասխանեց

— Դու երբէք մեծ կարողութիւն չես ունեցել, որտեղից պիտի տալիր։

— Ո՛չ, ասաց Պասկալ', եթէ կարողութիւն չունէի՝ պէտք է նուիրէի իմ ժամանակն ու աշխատանքը. բայց ես ալդ չեմ արել, Եթէ բժիշկների ասածը ճիշտ լինի, և ես աղքատուեմ ալս հիւանդութիւնից՝ հաստատապէս վճռել եմ իմ կեանքի մնացորդն աղքատներին նուիրել։

Պասկալի բարեկամները զարմանում էին, թէ ինչպէս նա համբերում է, ինչպէս է նա տանում ամենասարապելի ցաւերն անզամ։

— Ես հիւանդութիւնից չեմ վախենում, ողատասխանում էր Պասկալը, որովհետեւ գիտեմ առողջութեան վտանգը և հիւանդութեան գերազանցութիւնը։

Երբոր խղճահարւում էին Պասկալի վրայ՝ նա ասում էր. — Մի խղճաք, հիւանդութիւնը քրիստոնէի լնական դրութիւնն է, որովհետեւ նա պէտք

է տանջուի, սլէտք է զրկուի ամեն տեսակ բարիք-ներից և զգալիական զուարձութիւններից:

Բժիշկները պատուիրեցին Պասկալին հանգալին ջուր խմել. բայց օգոստոսի 14-ին նա ա-ամենասարսափելի զլխացաւ զգաց և վճռական կերպով պահանջեց քահանակ հրաւիրել:

— Իմ հիւանդութիւնը ոչ ոք չէ տեսնում, ա-սաց նա, ամենքն ես խաբուած են. զլխիս ցաւը մի տարօրինակ բան է:

Առաջին անգամն էր, որ Պասկալը գանգառ-ւում էր իւր տանջանքների վրայ: Բժիշկներն ա-սում էին, որ զլխի ցաւը «ջրի գոլորշիներից» էր և շուտով կրծշկուի: Սրա դէմ Պասկալը ասաց.

— Եթէ չէք ցանկանում ինձ մի բարութիւն անել և հաղորդել՝ ուստի ես ցանկանում եմ հա-ղորդութիւնը փոխարինել մի որեէ բարեգործու-թեամբ: Խնդրում եմ մի չքաւոր հիւանդ դանել և նրա համար վարձել մի հիւանդապահ, որն այդ հիւանդին խնամէ աբնալէս՝ ինչպէս ինձ: Ես ցան-կանում եմ, որ իմ և նրա մէջ ոչ մի զանազանու-թիւն չլինի, որովհետեւ երբ ես մտածում եմ, որ ինձ վրայ ալսքան ինամք է տարում, մինչդեռ կան շատ չքաւորներ, որոնք ինձանից աւելի են տանջում և նրանց սկակասում են ամենաանհրա-ժեշտ պիտուքները՝ ալս միտքն տոխպում է ինձ անտանելի տանջանքներ կրել:

Պասկալի քոլըն խկոյն մի քահանակ հրաւի-

լելով՝ հարցրնց նրան, թէ արդեօք չէ կարելի մի այդպիսի հիւանդ գտնել և բերել։ Այսպիսի հիւանդ չկանուեց. ուստի Պատկալը պահանջեց իրան տանել այն հիւանդանոցը, որտեղ անբռնմելի հիւանդներն են տեղաւորուած։

—Ես ուզում եմ աղքատների մէջ մեռնել։

Քովրն ասաց, որ բժիշկներն այդ բանը կարդեն։ Սրա վրայ Պատկալը սաստիկ բարկացաւ։ Հիւանդին հանդստացրին՝ խոստանալով տեղափոխել նրան՝ փոքր ինչ լսւանալուց լետով։

Այն-ինչ դլխացաւը դժոխակին տանջանքներ էր պատճառում Պատկալին։ Օգոստոսի 17-ին նա խնդրեց բժիշկներից համախորհուրդ կազմել, և աւելացրեց։

—Կարծեմ, այս խնդիրքով շատ եմ անհանգստացնում։

Բժիշկները հրամակեցին թան խմել, պնդելով որ նրա հիւանդութիւնը զլխազարութիւն է, միացած օջախին դոլորշիներիո հետ։

Բայց Պատկալ՝ չհաւատաց, Քովրն անդամ տեսաւ, որ եղբօր դրութիւնը վտանգաւոր է։ Եղբօրը ոչինչ չլայտնեց, մարդ ուղարկեց մոմեր և այլ իրեր զնելու հաղորդութեան համար։

Կէս զիշերին մօտ Պատկալ խխաց ցնցումների ենթարկուեց. երբ ցնցումները դադարեցին՝ նա մեռածի նման պառկած մնաց. Այս միջոցին եկաւ քահանանան, որը սենեակը մտնելով՝ բարձրաձայն

բացագանչեց. «ահա, ահա նա, որին այնպէս փափագում էիր»։ Այս բացազանչութիւնը Պատկալին ուշքի բերեց. նա դժուարութեամբ վեր կացաւ։ Հողորդուելիս նա սաստիկ արտասուեց. Պատկալի վերջին խօսքերն էին. «Թող Աստուած ինձ երբէք չթողնէ»։

Ցնցումները դարձեալ սկսուեցին. նա կորցրեց գիտակցութիւնը և մի օր հոգեվարք մնալուց իւտոյ վախճանուեց 19 օդոսառուի 1662 թ., 39 տարեկան հասակում։

Դիակահատութիւնից երեաց, որ Պատկալի ուղեղի թաղանթը և մարսողութեան գործարանները բորբոքուած էին գանգրէնով։ Գանկը համարեատառանց կարի էր։ Հաւանական է, որ հէնց ալս էր Պատկալի երկարատե գլխացաւի սպատճառը. տասրնութ տարեկան հասակից սկսած Պատկալ՝ տանջւում էր մշտական գլխացաւից. Գաղաթի վրայ մի ուկրալին ուռուցք կար. Պսակածե կարի հետքն անգամ չէր մնացել. Ուղեղը չափազանց մեծ էր, խիստ ծանր և թանձր. Գանկի ներսից, ուղեղացին սահմոքսիկների հանդէպ, երկու փոսիկ կար, որոնք լցուած էին շաղուած արիւնով և թարախով։ Ուղեղի ամրաթաղանթի վրայ գանգրէնի բորբոքումն էր սկսուած։

Պատկալին թաղեցին սուրբ Էտիէն եկեղեցում. Կին գրող Ժանլիս իւր լիշտակարանի մէջ

Հաւատացնում է, որ Օրէանեան դուքսը իւր  
ալխիմիական փորձերի համար մի կմախքի պէտք  
ունենալով՝ հրամակեց հանել Պատկալի ոսկորները։  
Այս առասպելը կրկնել է նաև Միշլէ իւր «Յեղա-  
փոխութեան պատմութեան» մէջ. բայց այժմ բոլո-  
րովին ապացուցուած է, որ դա միայն Ժանլիաֆ  
երեակալութեան պատողն է, ուրիշ ոչինչ։

Շամրիկ Շարքինեան  
Շաւարշ Թունեան  
Իրան-Թաւրիզ

---

## ԳԼՈՒԽ Թ.

Պատկալի փելիսովայութիւնը:

Պատկալը իրանից լեռու չթողեց ոչ մի փի-  
լիսովալիկան լիակատար աշխատութիւն, այնու-  
ամենալինիւ նա փիլիսովալութեան պատմութեան  
մէջ ունի իւր որոշ տեղը: Նրա աշխարհաճակեցո-  
ղութիւնը կարելի է բնորոշել՝ տալով նորան «քրիս-  
տոնէական սկեստիկականութիւն» կոչումը: Քրիս-  
տոնէութեան պատմութեան մէջ Պատկալը նոյն  
գերն է կատարել՝ ինչոր «Եկկլէսիաստի» (Ճողովողի)  
հեղինակը հրէից պատմութեան մէջ և Պիոնիը  
կլասիկական աշխարհում:

Այն ամեն բանին, ինչ որ քրիստոնէու-  
թեան է վերաբերում՝ Պատկալը անկեղծ և ան-  
պալման հաւատացել էր: Դաւանանքի, հրաշքների  
և քրիստոնէութեան արտաքին արարողութիւնների  
վերաբերմամբ Պատկալը ամենաանշան կասկած ան-  
դամ չէր տածում: իսկ մնացեալ բաների մէջ նա

կատարեալ սկեպտիկ էր: Մարդուս գիտակցութեան ոյժը, նիւթական բարիքների նշանակութիւնը, մարդկալին հիմնարկութիւնների արժանաւորութիւնը — բոլորը նորան կասկածելի էին թուում:

Պատկալի «Մաքերը» լաճախ համեմատում են Մօնտէնի «Փորձերի» և Դէկարտի փիլիսոփական աշխատութիւնների հետ: Արդարե Պատկալը մի քանի մաքեր է վերցրել Մօնտէնից, բայց ալդ մըտքերը նա իւր ուզածին պէս է խմբագրել, արտայալտելով իւր սղմուած, հակիրճ և միենուն ժամանակ պատկերաւոր ու կըակոտ ոճով: Պատկալ՝ Դէկարտի հետ համաձայն է միայն մեքենայականութեան կամ աւտոմատիզմի վերաբերեալ հարցում, նոյնպէս և նրանում, որ Դէկարտի պէս ընդունում է, որ մեր գիտակցութիւնը մեր գոյութեան անփոխարինելի ապացուց է: Բայց ալս դէպքում ևս Պատկալի հագեցակէտը բոլորովին տարբերւում է Դէկարտից. վէս մտածում եմ՝ ուրեմն ես զոյութիւն ունիմ», ասում է Դէկարտ: «Ես կարեկցում եմ իմ մերձաւորներին՝ ուրեմն գոյութիւն ունիմ ոչ միայն նիւթապէս, այլ և հոգեապէս», ասում է Պատկալը: Դէկարտ Աստուածութիւնն իբրև մի արտաքին ոյժ է ընդունում: Պատկալի համար Աստուածութիւնը սիրու սկզբունք է, որը միաժամանակ թէ արտաքին ոյժ է և թէ մեր մէջն է ապրում: Դէկարտի՝ Աստուածութեան մասին ունեցած հասկացողութիւնը ծիծաղելի է թուում Պատկալին: Վէս չեմ կարող

Ներել Դէկարտին այն, ասում է Պասկալը, որ նա Աստուածութեան սկզբունքն ընդունելով հանդերձ միենուն ժամանակ հիանալի կերպով կառավարում է առանց այդ սկզբունքին։ Դէկարտը դիմում է Աստուածութեան միայն նրա համար, որ զարկ տայ աշխարհային կարգերին, իսկ լետով թաղցնում է նրան լաւտնի չէ թէ որտեղ»։

Պասկալի սկեպտիկութիւնը գլխաւորապէս արմատացած է նրա այն հայեցքների մէջ, որոնցով նա ոչնչութիւն է համարում մարդու Փիզիքական և մտաւոր ոյժերը։ Պասկալի այս առթիւ առաջ բերած բոլոր ապացուցները բանաստեղծական եղանակով արտայալտուած մաթեմատիկական որոշումներ են՝ խառն աւետարանական և կլասիքական պատկերների և համեմատութիւնների հետ։ Փիլիսոփան անդադար դիմում է երկրաչափի, աստուածաբանի, մինչև անդամ բանաստեղծի օգնութեան։

Պասկալի բար մտածմունքների վրայ միշտ տիրապետող է հանդիսանում մաթեմատիկան։ Որինակ, երբ Պասկալ՝ միջնադարեան հեղինակներին հետեւլով, ուզում է արտայալտել տիեզերքի անսահմանութիւնը՝ դիմում է զուտ երկրաչափական ձեր։ Տիեզերքը «մի անսահման գունդ է, որի կենարոնն է ամեն տեղ, իսկ շրջապատը —ոչ մի տեղ»։ Երբ ցանկանում է ապացուցանել մարդկային կեանքի ոչնչութիւնը և համոզել մեզ, որ իրան համար

միւնոյն է, արդեօք իւր կեանքը տասը տարով կերկարանալ, թէ ոչ—այս միտքը նա պարզաբանում է զուտ մաթեմատիկական ձևով: «Անսահման քանակութիւնների հետ համեմատած՝ բոլոր սահմանաւոր քանակութիւնները միմեանց հաւասար են»: Երբ ուզում է ապացուցանել աստուածութեան հաւատալու անհրաժեշտութիւնը՝ նա խկոյն գիմում է հաւանականութեան թէօրիալին, և իւրաքանչիւր ենթագրութիւն գնահատում է ախնագէս ինչպէս որ խաղացողը գնահատում է խաղը:

Պասկալը մեզ առաջարկում է գրալ գալ և ասել, որ աստուածալին գոլութեան սկզբունքը պնդողը կարող է մէջտեղ գնել իւր բոլոր ստացուածքը, որովհետեւ լամենալին գէպս ոչինչ չի տարուի, բոլորն էլ ինքը կտանի:

Մինչև անգամ երբ նա ուզում է նկարագրել Աստուածութեան խորհրդաւոր լատկութիւնները, Պասկալը թէև պնդում է, որ նրանք անքննելի են՝ բայց ալխատում է այդ լատկութիւնները պարզաբանել մաթեմատիկական համեմատութիւններով: Օրինակ, Աստուածութեան ամեն տեղ լինելն ապացուցանելու համար նա ասում է. «Երեակարեցէք մի կէտ, որը շարժում է անսահման արագութեամբ»:

«Յտքերի» տասնումէկերորդ գլխում Պասկալը հետեւալ կերպով է արտակարում Աստուածութեան անըմբունելի լինելը.

«Անսահմանութեան վրայ աւելացրած միաւորը նրան ամենեին չէ մեծացնում: Սահմանաւորքանակութիւնը անսահմանութեան առաջ ոչնչանում է և զուտ ոչնչութիւն է ներկալացնում: Այսպէս և մեր միտքն Աստուածութեան առաջ, մեր արդարութիւնն աստուածալին արդարութեան առաջ: Մենք գիտենք, որ անսահմանութիւն կաէ, բայց չգիտենք նրա էութիւնը: Մենք գիտենք, որ սուտ է այն համոզմունքը, թէ թուերի շարքը սահմանաւոր է: Այստեղից պարզ է, որ մի անհուն անծալը թիւ կաէ, բայց չգիտենք դրա որպիսի թիւ լինելը: Նա չէ կարող ոչ զուգ լինել և ոչ կենտ, որովհետեւ մէկ միաւոր աւելացնելով՝ նրա էութիւնը չենք փոխում: Մենք ըմբռնում ենք սահմանաւոր ոչ միայն գոյութիւնը, այլ և էութիւնը, որովհետեւ մենք ևս սահմանաւոր և ծաւալական ենք: Մենք ըմբռնում ենք անսահմանութեան գոյութիւնը, բայց ոչ էութիւնը, որովհետեւ նա մեզ նման ծաւալ ունի, բայց սահման չունի: Բայց մենք մեր գիտակցութեամբ չենք կարող ըմբռնել Աստուածութեան ոչ զոյութիւնը և ոչ էութիւնը, որովհետեւ նա ոչ ծաւալ ունի, ոչ սահման»:

Պասկալ' ենթադրում էր, որ միակ հաւանական բացարութիւնը հաւատն է տալիս: «Մենք Աստուածութեան գոյութիւնը հաւատի միջոցով ենք իմանում, ասում է Պասկալը, իսկ նրա էութիւնը նրա փառքի միջոցով, փառքի՝ որն ար-

տալախտում է առաքինի մարդկանց կեանքումունքների կամ այստեղ ևս բարոյական սկզբունք կայ, բայց այս սկզբունքը Պատկալի համար առանձին և բացառական դեր չէ կատարում:

Պատկալը հիմնուելով՝ Պօղոս առաքեալի խօսքերի վրայ՝ ասում է, որ քրիստոնեաներին չէ կարելի պախարակել այն բանի համար, որ նրանք չեն կարողանում խելացի ապացուցներ տալ: «Քրիստոնեաները չեն որ իրանք են լայտարարում, որ հաւատում են այնպիսի բաների, որոնք կարող են անհեթեթութիւն համարուելու: \*)

Պատկալի ասելով՝ ամեն մարդ ստիպուած է ընդունել հետեւեալ ենթազրութիւններից մէկը՝ աստուածացին սկզբունք կամ կամ չկամ: «Պէտք է գրազ զալ, ասում է նա: Այդ ձեր կամքից չէ կախուած, դուք անպատճառ ստիպուած էք ընտրութիւն անել: Եթէ պէտք է ընտրել՝ ուրեմն տեսնենք թէ ինչն է ամենից քիչ ձեզ հետաքըրքրողը: Դուք կարող էք տարուել երկու բանաձմարտութիւն և բարիք (եթէ Աստուածութիւն չկայ): Այժմ չափենք կորուստն ու շահը: Յետք Պատկալ՝ աշխատում է ապացուցանել, որ ինկատի ունենալով շահի անհունութիւնը՝ մարդ կարող է մէջտեղ դնել իւր բոլոր ստացուածքը:

\*.) Խուզիթ Պօղոսի առ Կորնթացիս Ա. գլուխ Ա.

Ապա ինչ անենք, երբ գիտակցութիւնը չէ  
ուզում հաւատին ենթարկուել:

Առ Տօլստոյ խորհուրդ կտար ապարդամտա-  
նալ». դեռ նրանից շատ առաջ նոյն խորհուրդն  
էր տալիս և Պատկալը, միայն նոյն միտքը նա  
արտապատում էր աւելի անկեղծաբար, համարձակ  
և եռանդով։ Պատկալ՝ խորհուրդ էր տալիս լիմա-  
րանալ (abêtir), որն իհարկէ չէ կարելի բառացի  
մտքով հասկանալ՝ ինչպէս հասկացել է Փրանսիա-  
ցի փոլիստիակ Կուզէն, որն ինքն իրան խելօքի  
տեղ դնելով՝ խիստ մեծ լանդիմանութիւն կարդաց  
Պատկալի գլուխին։ Ակներմ է, որ Պատկալը այս  
խորհրդով ուզում է ասել, որ իւր կարծիքով հա-  
ւատի վերաբերեալ հարցերը չեն կարող ենթարկ-  
ուել մեր գիտակցութեան, որը, Պատկալի կարծի-  
քով, աշխատում է ներս սպրդուել իրան համար  
բոլորվին օտարութիւն և խորթ ասպարէղները։ Ֆի-  
զիքան և մինչև անդամ մաթեմատիկան հաւատի  
վերաբերեալ հարցերում բոլորվին անզօր են։  
«Աստուածալին գոյութեան մասին ապացուցներ ո-  
րոնելու փոխարէն, գրում է Պատկալը, աշխատե-  
ցէք քչացնել ձեր կրքերը»։ Այս նպատակով Պատ-  
կալը խորհուրդ է տալիս մինչև անդամ արտաքին  
կարգապահութեան ենթարկուել, օրինակ, խիստ  
պահպանել ձէսերը, ինչպէս ինքն էր անում իւր  
կեանքի վերջերում։ Ոհարկէ, այս ձեզ կստիտէ  
լիմարանալ», ասում է Պատկալ։ — Հէնց դրանից է,

որ վախենում եմ, կասէք.—«Ինչու, —հարցնում է  
Պատկալը.—դուք ինչ էք կորցնում։ Դուք կղառ-  
նաք ազնւ, հաւատարիմ, բարեգործ, երախտա-  
գէտ, անկեղծ, արդար։

Պատկալ՝ այսպիսով դրականապէս պնդում էր,  
որ գիտակցութիւնը պէտք է ենթարկուի հաւատի  
ազդեցութեան, և կրքերը պէտք է ասնձահարուին։  
Բայց հօ ալս է ամեն տեսակ միստիկականու-  
թեան հետեանքը։

Պատկալը կասկածանքով էր նայում այն ա-  
մանի վրա՝ ինչ որ հաւատից գուրս էր։ Այս իրո-  
ղութիւնը շատ նշանաւոր է իբրև մարդկային գոր-  
ծերի և գիտակցութեան քննադատութիւն։ Նրա  
համար ամեն ինչ ունալնութիւն և ոչնչութիւն է,  
ամեն ինչ, բացի մարդկային մտքից, որ չափով որ  
վերջինս ներկայանում է իբրև արտացոլումն Աստ-  
ուածութեան։ «Թող, ասում է նա, թող մարդ դի-  
տէ, զննէ բնութիւնը իւր վսեմ և լիակատար  
գեհութեամբ։ Թող նա հեռացնէ իւր հակեացքը  
շրջապատող ստոր առարկաներից։ Թող նայի այն  
շլացուցիչ լուսատուին, որ իբրև լաւիտենական  
չան դրուած է տիեզերքը լուսաւորելու համար։  
Թող երկիրը ներկայանալ նորան իբրև մի կէտ...  
Մեր հակեացքը կանդ է առնում, բայց երեակալու-  
թիւնն առաջ է գնում։ Բոլոր տեսանելի աշխարհը  
բնութեան պմնազարդ ծոցում մի աննկատելի գիծ  
է ներկայացնում... ինչ բան է մարդը բնութեան

մէջ։ Ոչինչ՝ համեմատելով անսահմանութեան հետրամեն ինչ՝ համեմատելով ոչնչութեան հետ։ Նա միջինն է ոչնչի և ամեն ինչի մէջ»։

Պասկալը մարդուս ոչնչութեան մասին դատելիս՝ Շօպէնհաուէրի նման դիմում է կծու հեղնութեան։

«Այն ամենը, ինչով որ մարդիկ զուարձանում են, ինչ որ նրանց պարծանքն է, փառասիրութեան անյագ ձգտումների առարկան՝ բոլորը մեր երեակալութեան պտուղն է, ուրիշ ոչինչ։ Եթէ տեղի չունենար ինքնախարէութեան զարմանալի ընդունակութիւնը, եթէ ոչնչանար ուրիշներին ապշեցնելու ցանկութիւնը՝ այն ժամանակ երկրաչին ոչ մի հարստութիւն չէր առաջացնի ոչ փառք, ոչ արտաքին բախտաւորութիւն։»

«Մեր դատաւորները շատ լաւ են հասկացել այս գաղտնիքը, Նրանց կարմիր վերարկուները, նրանց աքիսի մորթուց կարած վերնազգեստները, պալատները, որոնց մէջ դատում են,—այս տեսակ ամեն մի արտաքին փառահեղութիւն անհրաժեշտ էր։ Եթէ բժիշկները վերարկուներ չունենալին երժշկագետները քառանկիւնի դլխարկներ՝ այն ժամանակ նրանք չէին կարողանալ լիմարացնել մարդկանց ալնապէս՝ ինչպէս ալժմ են անում... Մեր թագաւորները չքեզ հագուստներ չեն հագնում, բայց նրանց հետեւմ են գեղարդաւոր պահապանները Բոլոր փողերն ու թմբուկները, նրանց շրջապատող

զօրքերը, — այս բոլորն ամենաքաջ մարդուն ան-  
գամ սարսափեցնում են, Բոլորովին մաքրուած,  
զտուած գիտակցութիւն պէտք է ունենալ մարդ,  
որ քառասուն հազար ենիշարիներով չըջապատ-  
ռւած փաղիշահին ևս կարողանալ նոյնպիսի մարդ  
համարել՝ ինչպէս որ ամենքն են... Եթէ բժիշկ-  
ներն իսկապէս թժկել կարողանալին՝ նրանք գըլ-  
խարկի պէտք չէին ունենալ, գիտութեան վսեմու-  
թիւնն ինքն ըստ ինքեան լարզանաց արժանի կլի-  
նէր»:

Պասկալ՝ թերահաւատութիւնով էր վերաբեր-  
ւում նաև ամեն տեսակ սովորական պաշտօննե-  
րին. «Դէպքը մարդկանց զարձնում է քարտաշներ,  
պինուորներ, կտուր շինողներ. Զինուորականի  
կարծիքով՝ իսկական գործը պատերազմն է, ոչ  
զինուորականները դատարկապորտներ են... Սովո-  
րութիւնը լաղթում է բնութեան... Երբեմն էլ  
բնութիւնը գերազանցում է, և մենք քարտաշի  
կամ զինուորի տեղ ուղղակի մարդ ենք տեսնում».

Պասկալի համար նոյնպիսի դատարկութիւն  
և ոչնչութիւն են ներկայացնում և այլ ամեն տե-  
սակ սովորութիւնները, կլիմակի, քաղաքականու-  
թեան և ժամանակի աղղեցութիւնից առաջացած  
տարբերութիւնները. Պասկալի այս նպատակով ա-  
րած դատողութիւնների մէջ մենք տեսնում ենք  
ուղղակի տասնութերորդ դարի փիլիսոփակու-  
թեան նախագուշակութիւնը. նաև երբեմն կարծես

թէ Ծուսսովի բերանով է խօսում: «Արդարութեան յաւիտենական և հաստատուն սկզբունքի փոխարէն մենք տեսնում ենք գերմանացիների և պարսիկների քմահաճութիւններն ու երեակալայութիւնները: Լայնութեան երեք աստիճանները տակն ու վրայ են անում ամբողջ իրաւաբանութիւնը, միջօրէականը վճռում է ձշմարտութիւնը: Սատուրնի Առիւծ համաստեղութեան մէջ երեալը որեէ եղեռնագործութեան սկիզբն է դառնում: Ի՞նչ հիանալի է այն արդարութիւնը, որը որեէ գետով է սահմանափակուած: Պիրինէլեան լեռների մի կողմը ձըշմարտութիւն է, միւս կողմը՝ ստութիւն»:

«Աւազակը, շնացողը, հալրասպանը, ամենքն էլ իրանց ժամանակ և իրանց տեղ առաքինի մարդիկ են համարուել: Միթէ կարելի է մտածել, որ մի ուրիշ մարդ ինձ սպանելու իրաւունք ունի, որովհետեւ նա գետի միւս ափումն է ապրում և նրա իշխանը կռուել է իմ իշխանի հետ, թէն ես աղդ մարդու հետ ոչ մի կռիւ չեմ ունեցել.—որանից էլ աւելի լիմար բան կարող է լինել: Անկասկած, կան քնական օրէնքներ, բայց մեր պճնուած ու լեղաթիւրուած գիտակցութիւնն ամեն ինչ փչացրել է, Եւ սակայն որքան անզօր է այդ գիտակցութիւնը: Մեր մտքերի ընթացքը փոխելու համար անհրաժեշտ չէ թնդանօթի որոտը. դրա համար բաւական է և սրոցի շաշիւնը: Ալդ մարդու վատ դատողութեան վրայ մի դարմանաք,—ճանճը տզզում է նրա

ականջին։ Ո՞ւ քեզ և տիեզերքի պետ։ Յ', խեղ-  
կատակ հերսոս։

Խսկապէս ԲԻՆ բան է մարդկալին զուարձու-  
թիւնը. Նոր գժբախտութիւնների, նոր տանջանք-  
ների պատճառ։ ԱԵՐԾ մտածում եմ, ասում է Պաս-  
կալ՝, մարդկանց վրդովմունքների մասին, այն  
գժբախտութիւնների և վտանգների մասին, որոնց  
ենթարկում են մարդիկ՝ ես լաճախ ասում եմ, որ  
բոլոր մարդկալին թշուառութիւններն առաջ են  
դալիս մի հանգամանքից, այն է, որ նրանք սե-  
նեակում հանգիստ նստել չեն կարողանում։ Նիւ-  
թապէս փոքր ի շատէ ապահովուած մարդը, եթէ  
տանը նստելու կարողութիւն ունենար՝ ծովալին  
ճանապարհորդութիւն չէր անի, պատերազմի չէր  
գնալ։ Բայց երբ մեր թշուառութիւնների աղքիւրը  
գտնելով, աշխատում էի հասկանալ, թէ արդեօք  
ԲԻՆ է պատճառը, որ մարդիկ թշուառութեան են  
մատնում իրանց՝ տեսալ, որ այստեղ մի տեսակ  
խսկական բարիք կալ…… Երևակալեցէք մի ամենա-  
լաւ զրութիւն, օրինակ թագաւորի զրութիւն։ Եթէ  
նա զբաղուած չէ, եթէ նրա կեանքի մէջ զանա-  
զանակերպութիւն չկայ՝ ամենալաջող կեանքն ան-  
գամ շուտով նրա համար զզուելի կդառնալ։ Նա  
կոկսէ մտածել դաւադրութեան և ապստամբութեան  
մասին, մահուան մասին և վերջիվերջու կլինի ա-  
ւելի անբախտ քան իւր պալատականներից ամենա-  
վերջինը, որը կարողանում է իւր կեանքի մէջ զա-

նազանակերպութիւն մտցնել։ Ահա հէնց ակս տեղից է ծագում զուարձութեան բուռն ձգտումը։ Ահա թէ ինչու համար են փնտուում իսաղեր, կանաչք, պատերազմներ, մեծ պաշտօններ։ Ոչ մի որսորդ չէ որսում նապաստակը հէնց ուղղակի նապաստակի համար։ Եթէ նորան ալզ նապաստակը ձրի անգամ տալին՝ չէր վերցնի։

«Մարդիկ փնտուում են աղմուկ, իրարանցում, որոնք ցրելով նրանց մաքերը՝ չեն թողնում մտածել կեանքի ոչնչութեան մասին։ Այսպէս է անցնում մեր ամբողջ կեանքը. մենք հանգստութիւն ենք փնտուում, աշխատելով հեռացնել խոչնորաները, բայց հէնց որ հեռացնում ենք ալզ խոչընդուները՝ հանգտուութիւնը մեզ համար անտանելի է դառնում։ Մարդս ալնքան անբախտ է, որ ձանձրանում է առանց որևէ պատճառի անգամ, ուղղակի խւր կազմուածքն է ալզ պահանջում, և նա ալնքան փառասէր և մանրակրկիտ է, որ ձանձրութեան և սրտնեղութեան հազարաւոր պատճառներ ունենալով հանդերձ՝ որևէ բիլիարտի գնդակի նման դատարկ բան կարողանում է գրաւել նրան։ Չէ որ վաղը բարեկամների շրջանում պիտի պարծենալ, որ խւր հակառակորդից լաւ է խաղացել։ Ի՞նչ է նշանակում կանցլէր կամ մինիստր լինել։ Նշանակում է մի այնպիսի դրութիւն, որ առաւարձից մինչև երեկոյ նախասենեակում և առանձնասենեակում խոնուին բազմաթիւ մարդիկ, ու-

բոնք չեն թողնում այդ բախտաւորին, որ ինքն իւր վրայ մտածէ: Թող նա պաշտօնաթող լինի, պահպանելով իւր ամբողջ հարստութիւնը.—այն ժամանակ նա անբախտ կլինի և ամենից թողնուած, որովհետեւ այժմ նրան ոչ ոք չէ արգելում, որ ինքն իւր վրայ մտածէ:

Ավերջիվերջու ի՞նչ է նոյն խակ մարդը: Մենք չզիտենք, թէ ի՞նչ է նրա մարմինը, ի՞նչ է նրա հոգին. մանաւանդ չզիտենք, թէ ի՞նչ կերպ է մարմինը հոգու հետ միանում: Ի՞նչ է մարդը—բոլոր իրերի այդ դատաւորը, երկրային լիմար որդը. ճշմարտութեան անօթը, մոլորութիւնների աղքանոցը. տիեզերքի փառքն, ու խալտառակութիւնը: Ո՛չ հրեշտակ, ոչ կենդանի... Մեր ամբողջ կեանքը, ամբողջ փիլիտփակութիւնը կախուած է այն հարցից, թէ արդեօք մահկանացու է մեր հոգին, թէ անմահ:

Ակարելի է, ասում է Պասկալ', կարելի է չմշակել Կոպէրնիկոսի թէօրիան, բայց հոգու անմահութեան հարցն անպատճառ պէտք է վճռուի այս կամ այն մտքով»: Այն-ի՞նչ կան փիլիտփաներ, որոնք իրանց թէօրիաներն այս հարցից բոլորովին անկախ են կազմում: Սարսափելի է, ասում է Պասկալ', թէ այս դէպքում ո՞ր աստիճանի է հասնում մարդկանց անտարբերութիւնը: «Մենք նման ենք ամայի կղզում թափառող ձանապարհորդների կամ շղթապակապ լանցաւորների, որոնք ամեն օր կա-

տարեալ անտարբերութեամբ տեսնում են, թէ  
ի՞նչպէս սպանում են իրանց ընկերներից մէկին,  
իմանալով՝ որ շուտով իրանց հերթն ևս պիտի  
գայ: Ի՞նչ կարելի է մտածել այն մահապարտի մա-  
սին, որը փրկութիւն աղերսելու համար միայն մի-  
ժամ ունի, և իմանալով որ հաւաստի փրկութիւն  
կառանաց՝ պիկէտ խաղալով է անցնում այդ ժամը:  
Ահաւասիկ մեր պատկերը: Այս քաւոսից մեզ ով  
կարող է հանել: Ո՞չ սկեպտիկները, ոչ փիլիսոփա-  
ները և ոչ դաւանաբանները ոչի՞նչ չեն կարող ա-  
նել: Սկեպտիկը հօ չէ կարող կասկածել ամեն բա-  
նի վրայ, օրինակ, երբ նրան ծակծկում կամ ալ-  
րում են, վերջապէս նա հօ չէ կարող կասկածի  
մասին ևս կասկածել: Դաւանաբանն աշտարակ  
կէինէ մինչեւ երկինքը, բայց նա կկործանուի, և  
առների տակ անդունդ կբացուի: Կնշանակէ՝ գի-  
տակցութիւնն ակստեղ շատ թոլէ: Միայն սիրաը,  
հաւատն ու սէրը միայն կարող են մեզ հանել այս  
խորիսորատից»:

Սրանք են ահա սին պերճախօս ազացոլցնե-  
րը, որոնք սկեպտիկ Պասկալին հաւատացեալ դար-  
ձրին:

Աւասեղ, իհարկէ, Պասկալի վարդապետու-  
թիւնն ուսումնասիրելու տեղը չէ: Բաւական է  
միայն ասել, որ մերճաւորներին սիրելու մասին  
Պասկալի բոլոր ասածներն ամենին չեն հակա-  
ռակում գիտակցոթեան պահանջներին և ամենին

չեն դրժում գիտակցութիւնը։ Իհարկէ, ազնիւ, արդար, անկեղծ և բարեգործ լինելու համար անհրաժեշտ չէ պիմարանալը, ինչպէս առաջարկում է Պասկալ։ Ընդհակառակը, գիտակցութիւնը բարոյական գաղափարներին առելի կանոնաւոր ընթացք է տալիս։ Եթէ մինչև անդամ Պասկալի հետ ընդունենք, որ գիտակցութիւնն անզօր է, և մտաւոր գործունէութիւնն մեքենալորէն է կատարւում, ինչպէս Պասկալի թուաբանական մեքենալի անիւնը՝ այն ժամանակ ես չէ կարելի առել, որ գիտակցութիւնը և քրիստոնէութեան բարոյական կողմն իրար հետ չեն հաշտում։ Իսկ քրիստոնէութեան միւս կողմը, որով Պասկալը այնքան դրաւուած է՝ բարոյական հարցերի հետ կապուած է միայն արտաքուստ, պատահական կերպով, ուստի և այս տեսակ հարցերի մասին կարելի է զանազան կարծիքներ ունենալ՝ և միենովն ժամանակ համակարծիք լինել մարդկալին բարոյականութեան վերաբերմամբ։

Ինչեիցէ, փիլիսոփակութեան պատմութեանը Պասկալը մեծ ծառալութիւն է մատուցել, որովհետեւ նա հարցերը դրել է առելի ուղիղ, անկեղծ և առելի տաղանդաւոր կերպով, քան նոյն ոգով գրող շատ փիլիսոփաներ, որովհետեւ նրա խօսքը չէր հակառակում գործին, և նրա ամբողջ կեանքը իւր գաղափարների կատարեալ մարմնացումն էր։ Եթէ Պասկալը թուլութիւններ ես ունէր, եթէ մասամբ

մոլորուած էր՝ ալդ էլ նա երկար տարիներ շարու-  
նակ քաւեց ֆիզիքական և բարոյական ծանր տան-  
ջանքներով։ Պասկալը արժանաւոր տեղ է բռնում  
մարդկալին զարգացման պատմութեան մէջ հէնց  
միայն նրանով, որ անխնակ մերկացրեց և խալտա-  
ռակեց եղուիտական կեղծաւորութիւնն ու փարի-  
սեցիութիւնը, եթէ չխօսենք նոյն իսկ նրա հան-  
ձարեղ զիտնական աշխատութիւնների մասին։

70.



[5000 դր.]

ԳԱԱ Դիմնարար Գիտ. Գրադ.



FL0594643

